«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

PH international ADVANCING SOCIETIES. CONNECTING PEOPLE

ICHD Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

ՎԱՅՔ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2024

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Վայք խոշորացված համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ համահամայնքային երիտասարդական քննարկման արդյունքների ամփոփման զեկույց

Այս զեկույցը ներկայացնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում 2024թ. հունվարի 30-ին Վայք խոշորացված համայնքում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված համահամայնքային երիտասարդական քննարկման արդյունքները:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը՝ խթանելու Հայաստանում երիտասարդների հանրային ներգրավվածությունը և ժողովրդավարական գործընթացները: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից և իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Սույն զեկույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այստեղ ներկայացված բովանդակությունը «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ»-ի ենթադրամաշնորհառու Մարդկային զարգացման միջազգային կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները: Ստորև արտահայտված տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկման մասնակիցների կողմից, և միշտ չէ, որ արտահայտում են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 3
Ամփոփագիր 4
1. Համահամայնքային քննարկումների ձևաչափը 5
2. Վայքի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը 6
3. Սցենարների նախապատրաստման գործընթացը 7
3.1. Սցենարներ 7
Սցենար (ծրագիր) 1. Վայքի մշակույթի տան օրինակով՝ մշակութային կետերի ստեղծում համայնքի խոշոր բնակավայրերում 7
Սցենար 2. Ներհամայնքային տրանսպորտի երթուղիների ստեղծում 8
Սցենար 3. Համայնքային մարզական/սպորտային համալիրի ստեղծում 9
Սցենար 4. Տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնի ստեղծում 9
Սցենար 5. Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնում 10
4. Վայքի համահամայնքային երիտասարդական քննարկումը 11
4.1. Վայքի համահայնքային քննարկման արդյունքներն՝ ըստ սցենարների 12
4.2. Սոցիալական երկխոսությունը երիտասարդների և մեծահասակների միջև 14
5. Մասնակիցների հիմնական դիտարկումներն ու եզրահանգումները 18
6. Քվեարկությունների արդյունքները 34
Հավելված 1. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 35
Հավելված 2. Ցուցումներ սեղանավարներին և գրառողներին 36
Ցուցումներ Վայքի համահամայնքային քննարկման սեղանավարների (facilitator) համար 36
Քվեարկության փուլը 37
Ցուցումներ քննարկման գրառողների համար 37

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն (ՄԶՄԿ) իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Վայք խոշորացված համայնքում համահամայնքային երիտասարդական քննարկում կազմակերպելու հարցում: Շնորհակալ ենք մասնակցության, օժանդակության և խորհուրդների համար:

Մեզ համար մեծ բավականություն է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում աշխատել մեր գործընկեր կազմակերպությունների հետ, և մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում հատկապես ծրագիրն իրականացնող կոնսորցիումը գլխավորող «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպությանը Վայքի քննարկմանը և ընդհանրապես ծրագրի շրջանակում մեր բոլոր քայլերին անգնահատելի օժանդակության համար: Ամենաբարդ նախաձեռնություններն անգամ հեշտ իրականանալի են թվում, երբ մեջքիդ ուժեղ գործընկեր կա:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ ի դեմս Երիտասարդության հարցերի վարչության, իրենց կարևոր և ուղղորդիչ առաջարկությունների, խորհրդատվության, աջակցության, ինչպես նաև Վայքի քննարկմանը մասնակցելու համար[1]:

Շնորհակալ ենք քննարկումների պրոֆեսիոնալ սեղանավարներին և գրառողներին, ովքեր եկան Վայք և օժանդակեցին, որ միջոցառումը կայանա պատշաճ մակարդակով:

Եվ թեև վերջում, բայց ամենակարևոր շնորհակալությունը: Շնորհակալ ենք Վայք խոշորացված համայնքում համահամայնքային երիտասարդական քննարկման բոլոր մասնակիցներին իրենց մոտիվացված ու բարձրամակարդակ մասնակցության համար: Շնորհակալ ենք Վայքի համայնքային իշխանություններին ոչ միայն քննարկման կազմակերպմանն ամենագործուն կերպով օժանդակելու, այլև քննարկումներին մասնակցելու համար: Անգնահատելի էր Վայքի համայնքապետարանի, Վայքի «Solution HUB» ՀԿ-ի, մասնավորապես կազմակերպության հիմնադիր-նախագահ Լուսինե Կարապետյանի, և կազմակերպության շահառու երիտասարդների դերը քննարկման սցենարների մշակման հարցում, ինչի համար կրկին մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց:

[1] Ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) հետ համատեղ՝ համաձայն 2021թ. դեկտեմբերի 30-ին կնքված համագործակցության հուշագրի, որը հասանելի է ՀՀ ԿԳՄՄՆ կայքում, հետևյալ հղումով՝ https://escs.am/files/files/2023-01-05/fac682bfe40437233757b54c35ec3f88.pdf:

Ամփոփագիր

2024թ. հունվարի 30-ին Վայք խոշորացված համայնքի մի շարք բնակավայրերի ավելի քան 90 բնակիչներ հավաքվել էին մեկ հարկի ներքո՝ մասնակցելու համահամայնքային քննարկման:

Մասնակիցները քննարկեցին Վայք խոշորացված համայնքի, մասնավորապես, երիտասարդների կարիքներից բխող զարգացման հինգ ծրագիր, որոնք ՄԶՄԿ-ն մշակել էր Վայքի համայնքապետարանի, Վայքի «Solution HUB» ՀԿ-ի և կազմակերպության շահառու երիտասարդների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրերի առավել ընդհանրական գաղափարները դրված էին համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում, իսկ համայնքապետարանի և համայնքի երիտասարդների հետ արդյունավետ աշխատանքի շնորհիվ դրանք ստացան խիստ շոշափելի և պատկերացնելի ծրագրային առաջարկների տեսք: Հենց դրանք էլ մեծ քննարկման հիմնական թեմաներն էին:

Քանի որ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակներից է խթանել երիտասարդների մասնակցությունն իրենց վերաբերող որոշումների կայացմանն ամենատարբեր մակարդակներում և ըստ ծրագրի առանցքային մոտեցման՝ Երիտասարդների դրական զարգացման հայեցակարգի՝ երիտասարդ-մեծահասակ երկխոսությունը երիտասարդների լսելի լինելու և համայնքում նրանց արդյունավետ ներգրավման կարևորագույն գրավականներից է, միջոցառմանը մասնակցում էին հավասար համամասնությամբ՝ 15-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ, ինչպես նաև 36-74 տարեկան մեծահասակներ Վայք խոշորացված համայնքի բնակավայրերից՝ Ազատեկից, Բարձրունուց, Հերհերից, Վայք քաղաքից, խոշորացված համայնքի այլ բնակավայրերից:

Քննարկումը տեղի ունեցավ յուրահատուկ ձևաչափով, որը 2004թ. տեղայնացվել և կիրառվում է ՄԶՄԿ կողմից Հայաստանի տարբեր համայնքներում: Ընտրված ձևաչափը համայնքի բնակչության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներին հնարավորություն էր ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները: Նույն դահլիճում ութ կլոր սեղանների շուրջ մասնակիցները լիուլի արտահայտվեցին առաջարկվող ծրագրերի, այդ թվում.

- համայնքում մշակութային կետեր բացելու,
- ներհամայնքային տրանսպորտային երթուղիներ անցկացնելու,
- տարեցների համար ժամանցի և խնամքի կենտրոն ստեղծելու,
- սպորտային համալիր կառուցելու,
- երիտասարդների համար զբաղվածության կենտրոն հիմնելու,
- ինչպես նաև քննարկման ընթացքում հնչած այլ գաղափարների մասին:

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառմամբ՝ քննարկման ընթացքում հնչած մտքերն ամփոփվեցին ավելի քան 350 գրառումներով, որոնք լավ հիմք են հետագայում բազմակողմանիորեն վերլուծելու համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության կարծիքներն ու մտորումները զարգացման ծրագրերի և առաջնային խնդիրների շուրջ: Քննարկումն ամփոփվեց քվեարկությամբ, որի միջոցով յուրաքանչյուր մասնակից իր դիրքորոշումը հայտնեց՝ առաջնահերթություն տալով առաջարկված ծրագրերից մեկին:

Ըստ քվեարկության արդյունքների՝ մասնակիցների մոտ 40%-ն առավել առաջնահերթ համարեց խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերում Վայքի մշակույթի տան օրինակով մշակութային կետեր հիմնելու վերաբերյալ ծրագիրը՝ միաժամանակ այդ գաղափարը հարստացնելով ստեղծագործական և իրատեսական նոր լուծումներով:

Քննարկմանը ներկա էին նաև ՀՀ ԿԳՄՍՆ Երիտասարդության հարցերի վարչության, ինչպես նաև Վայքի համայնքապետարանի ներկայացուցիչները:

Վայք խոշորացված համայնքի բնակիչների երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և բավականին վստահելի տեղեկությունների աղբյուր են Վայքի համայնքային իշխանությունների, բոլոր որոշում կայացնողների համար՝ հասկանալու համայնքի զարգացման ծրագրում տեղ գտած ուղղությունների առաջնահերթությունների ընկալումը համայնքի բնակիչների կողմից:

1. Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄՌՄԿ կողմից 2004 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ շարքային քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները, հատկապես երիտասարդները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է՝ մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով: Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունը՝ գործընթացում հարյուրավոր շարքային քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես, հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես, բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա՝ ի հակադրություն երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Կլոր սեղանի շուրջ քննարկումներին, ձայնի հավասար իրավունքով, մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կարծիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ստացված ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին, համակարգչային ծրագրի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել՝ հօգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողներին հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: **Հավելված 1-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:**

2. Վայքի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը

Վայք խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման՝ երիտասարդներին առաջնահերթ հետաքրքրող ծրագրերի շուրջ համահամայնքային քննարկումների գործընթացի արդյունավետության և ներառականության տեսանկյունից հանրային քննարկման հիմքում դրվեցին համայնքային իշխանություններ-հանրային հատված-շահառու երիտասարդներ-փորձագիտական մշակում քառանկյան համագործակցային արդյունքներ՝ **համայնքի զարգացման սցենարներ՝** նպատակ ունենալով հանրային կարծիքը պարզել համայնքային գերակայությունների և երիտասարդության հետաքրքրությունների հատման սեգմենտում: Ավելի պարզ՝ **«սցենարը» համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները կոնկրետ իրականանալի ծրագրերի վերածած պատկերացումների համառոտագիրն է**, որը թույլ է տալիս մասնակիցներին հասկանալ, թե առկա խնդիրն ինչ քայլերով է առաջարկվում լուծել, սեփական առաջարկներով հարստացնել այդ սցենար-ծրագրերը, այնուհետև իրենց ընտրությամբ առաջնայնություն տալ սեղանին դրված այդ տարբերակներին կամ ընդհանրապես մերժել:

Արդյունքում ստացվում է յուրօրինակ շղթա, որտեղ առկա քաղաքականության փորձագիտական մշակումները սցենարային մեխանիզմով դրվում են քննարկման, տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող համայնքի բնակիչների մտքերով ու զգացումներով հարստացվում, վերլուծվում և դառնում նոր փորձ: Այս տեսանկյունից համայնքային գերակայություններ-սցենարներ-հանրային քննարկում-վերլուծություն-համայնքային գերակայություններ փակ շղթան աշխատեց անխափան:



Գծապատկեր 1. Վայքի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը

Քննարկման արդյունքները հարուստ նյութ են պարունակում հետագա վերլուծությունների համար: Միևնույն ժամանակ, սցենարներում ուրվագծված՝ Վայքի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը միտված ծրագրային գաղափարների ընդհանրական պատկերները ոչ միայն միս ու արյուն ստացան, այլև

համայնքի ավագանուն, պետական համապատասխան գերատեսչություններին ու հնարավոր ներդրողներին ներկայացնելու տեսանկյունից շատ ու շատ ուժեղացան՝ հիմքում արդեն ունենալով հանրային լուրջ աջակցություն:

3. Սցենարների նախապատրաստման գործընթացը

Վայք համայնքի զարգացման 2022-2026 թվականների ծրագրի (http://vdzor.mtad.am/files/docs/61754.pdf) համակողմանի վերլուծությունը երիտասարդների խնդիրներին առնչվող տեսանկյունից գործընթացի սկիզբն էր: Ծրագիրը, որպես հայեցակարգային փաստաթուղթ, անդրադառնում է երիտասարդությանը մտահոգող խնդիրներին առավել ընդհանրական տեսանկյունից՝ արձանագրելով առկա կարիքներն ու գալիք նախաձեռնությունների գերակայությունները: Հետևաբար, կարիք կար հայեցակարգային դրույթները կոնկրետ, հնարավոր և, որ ամենակարևորն է, իրականանալի ծրագրային գաղափարների վերածել:

Վայքի համայնքապետարանում արդեն իսկ մեծ աշխատանք կար արված կոնկրետ ծրագրերի նախանշման, նպատակադրումների և իրականացման վերաբերյալ պատկերացումների համակարգման ուղղությամբ: Ակնհայտ էր, որ համայնքային իշխանությունները լավ գիտեն երիտասարդներին հուզող խնդիրները և մեծ աշխատանք են տանում այդ ուղղությամբ: Առկա ծրագրային պատկերացումներն այնքան շատ էին, որ հաջորդ փուլով հարկ էր դրանք խաչաձև ստուգել արդեն բուն շահառուների՝ երիտասարդների հետ՝ ցանկը կրճատելու և առաջնահերթություններ սահմանելու համար:

Վայքում ակտիվ գործունեություն ծավալող «Solution HUB» ՀԿ-ն պատրաստակամորեն ներգրավվեց Վայքի երիտասարդների դիտարկումները և գաղափարների ներքևից-վերև շղթան գործի գցելու կարևոր հարցում: Պարզվեց, Վայքի երիտասարդական կազմակերպությունների և ակտիվ երիտասարդների պատկերացումների ու ցանկությունների և համայնքապետարանում մշակվող ծրագրային դրույթների միջև էական խզում չկար:

Վերլուծական, գաղափարների համադրման աշխատանքներն ավարտվեցին 5 ծրագրային առաջարկների՝ սցենարների, մշակմամբ:

3.1. Սցենարներ

Ենթադրվում է, որ քննարկման ներկայացված սցենարներում նկարագրված ծրագրերն իրականացնելու համար համադրելի ռեսուրսներ են պահանջվում, իսկ առկա ռեսուրսներն անսպառ չեն, հետևաբար մասնակիցները ոչ միայն պիտի կարողանային ներկայացված գաղափարների թեր և դեմ կողմերը վերհանել, այլև ընտրություն կատարել՝ սահմանափակ ռեսուրսները առաջին հերթին ո՞ր նպատակին իրենք կուղղեին: Սա, իհարկե, քննարկումը պիտի դարձներ շատ ավելի բարդ ու էմոցիոնալ, և իրականում հենց այդպես էլ եղավ: Ստորև ներկայացված են քննարկման սցենարները:

Սցենար (ծրագիր) 1. Վայքի մշակույթի տան օրինակով՝ մշակութային կետերի ստեղծում համայնքի խոշոր բնակավայրերում

Վայքի մշակույթի տունը **համայնքի պատանիներին ու երեխաներին կապում է** գրքի, երաժշտության, բեմարվեստի, կինոյի, շախմատի և մի շարք այլ մշակութային և սպորտային ուղղությունների հետ, որոնք ժամանակակից կյանքում «պարտվում են» սոցիալական ցանցերին, օնլայն խաղերին կամ արևաածաղկին: Բայց որ ոչ պակաս կարևոր է, այն **ընդհանուր հետաքրքրությունների շուրջ հավաքում է մանուկներին ու երիտասարդներին**, դարձնում ավելի թիմային, ավելի բաց և հնարավորություն տալիս ինքնադրսևորվելու: Վայքի մշակույթի տանը շատ կարևոր հոտ կա՝ տպագիր գրքի հոտը, շատ կարևոր ձայներ կան՝ ազգային և դասական երաժշտության ձայները, շատ կարևոր ջերմություն կա՝ միասին դիտելու, միասին բեմադրելու, միասին մրցումների գնալու, միասին հաղթելու, միասին տոնելու ու միասին տխրելու ջերմությունը:

«Վայոց ձորում տեղի ունեցավ դպրոցական 16-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլը... Համառ պայքարից հետո՝ առաջին տեղն է զբաղեցրել Վայքի հիմնական դպրոցը»: Հայաստանի շախմատի ֆեդերացիայի՝

2022 թվականի այս կարճ մամլո հաղորդագրությունը լավագույնս է ամփոփում այն միջավայրը, որ ստեղծվել է **Վայք քաղաքում երիտասարդների հետ տարվող աշխատանքի** արդյունքում:

Սակայն: Վայք խոշորացված համայնքը Վայք քաղաքից բացի բաղկացած է ևս 16 բնակավայրերից (Ազատեկ, Արին, Արտավան, Բարձրունի, Գոմք, Զառիթափ, Զեղեա, Խնձորուտ, Կարմրաշեն, Հերհեր, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Սարավան, Սերս, Փոռ): Համայնքի բոլոր բնակավայրերից միայն Վայքում կա մշակույթի տուն, և այն այս պահին ծառայում է հիմնականում Վայքի պատանիներին ու երիտասարդներին: Մյուս համայնքների շահառուները տարածության, ճանապարհների, տրանսպորտային խնդիրների և այլ պատճառներով հիմնականում **դուրս են մնում կազմակերպված մշակութային կյանքի և Վայքի մշակույթի տան ընձեռած հնարավորություններից**:

Այս խնդիրն անընդհատ բարձրաձայնվում է համայնքի երիտասարդների կողմից, և Վայքի համայնքապետարանում ձևավորված նպատակադրում կա **մշակութային կետեր ունենալ համայնքի խոշոր բնակավայրերում**: Ակնհայտ է, որ իրենց բնակավայրում կամ իրար մոտ գտնվող բնակավայրերից մեկում **Վայքի մշակույթի տան օրինակով ավելի փոքր մշակութային կետերը** կարող են հանդիսանալ տվյալ բնակավայրերի երիտասարդների ու երեխաների համար օգտակար և հաճելի զբաղմունքի, սովորելու ու հետաքրքրվելու հրաշալի հանգույցներ: Այդպես կլուծվի գյուղական բնակավայրերում երիտասարդների օգտակար զբաղմունքի հարցը:

Ակնհայտ է, սակայն, որ **համայնքի մարդկային, ֆինանսական հնարավորություններն անսպառ չեն**: Հետևաբար պետք է հասկանալ՝ **որքանո՞վ արդյունավետ կլինեն նման մշակութային կետերը** համայնքի բնակավայրերում, համապատասխան մասնագետներ կա՞ն այդ բնակավայրերում, որ կկարողանան կազմակերպել մշակութային կյանքը, կհետաքրքրի՞ գաղափարը բնակիչներին, թե՞ քչերը կգերադասեն օգտվել Վայքի մշակույթի տան հնարավորություններից:

Սցենար 2. Ներհամայնքային տրանսպորտի երթուղիների ստեղծում

Համայնքային տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը Վայք խոշորացված համայնքում շարունակում է մնալ լուծման կարիք ունեցող կարևորագույն խնդիրներից մեկը: Համայնքի **16 բնակավայրերը կապված չեն մեկը մյուսին** ու Վայքին տրանսպորտային համակարգով: Ներհամայնքային ուղևորափոխադրումների բացակայության հիմնական պատճառն այն է, որ մասնավոր ընկերությունների համար համայնքի երթուղիներով նման ծառայությունների մատուցումը շահութաբեր չէ:

«Ներհամայնքային երթուղիների առկայությունը- 0» կարդում ենք Վայք խոշորացված **համայնքի անձնագրում**:

Առկա իրականությունը ոչ միայն չի խթանում համայնքի տարբեր բնակավայրերի միջև տնտեսական կապերի ամրապնդումը, այլ կարող է հանգեցնել բազմաթիվ լրջագույն սոցիալական, կրթական, առողջապահական, ինչպես նաև **երիտասարդների կենսագործունեության ու զարգացման համար կարևոր այլ խնդիրների**:

Այսօր համայնքն ունի **1 գրադարան, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 ավագ դպրոց և 1 մարզադպրոց: Եվ 17 բնակավայր**, որոնք իրար կապված չեն տրանսպորտային երթուղիներով...

Նման իրականությունը կարող է հանգեցնել.

- դպրոցահասակ պատանիների՝ կրթությունից դուրս մնալուն, քանի որ ակնհայտորեն ոչ բոլոր բնակավայրերն ունեն միջնակարգ կամ ավագ դպրոցներ,
- համայնքի մշակութային, սպորտային և ակտիվ ժամանցի կենտրոններից օգտվելու անհնարինության,
- երիտասարդների համար իրենց բնակավայրերում զբաղմունքի բացակայության,
- երիտասարդների շրջանում՝ արտագաղթի հակվածության մեծացման և այլն:

Համայնքի երիտասարդներն այս խնդիրը գերկարևոր են համարում, և Վայքի համայնքապետարանում ձևավորված նպատակադրում կա համայնքի բնակավայրերի միջև **մի քանի ուղղությամբ կազմակերպել տրանսպորտի երթուղիներ**:

Քանի որ փորձն արդեն իսկ ցույց է տվել, որ նման երթուղիների աշխատանքը շահութաբեր չէ, առանց համայնքի միջամտության, ամենայն հավանականությամբ, մասնավոր ընկերությունների համար այն իրականացնելը տնտեսական հետաքրքրություն չի ներկայացնի: Կարիք կլինի **ֆինանսական**

միջամտության՝ սուբսիդավորման կամ այլ խթանիչ լուծումների, ինչը ենթադրում է համայնքային ծախսերի ավելացում:

Հետևաբար, այս գաղափարի առաջնահերթության մասին մտածելիս մենք պետք է այն դիտարկենք լայն համատեքստում, հիմնավորենք դրա ավելի շատ կարևոր լինելն՝ այլ ծրագրերի համեմատ: Չէ՞ որ բյուջետային միջոցները անսպառ չեն, և հնարավոր չէ բոլոր կարևոր գաղափարներն իրականություն դարձնել միաժամանակ: Պետք է կարողանալ **ընտրել առաջնահերթությունը**:

Սցենար 3. Համայնքային մարզական/սպորտային համալիրի ստեղծում

Երիտասարդների ներգրավմամբ ակտիվ, առողջ, **մարզական կյանքի կազմակերպումը** Վայք խոշորացված համայնքի ծրագրային առաջնահերթությունների մեջ է: Համայնքում գործում է **2 մարզական կառույց՝ մարզադաշտ և մարզադպրոց**: Գործում են մարզական խմբակներ, բավական թվով երիտասարդներ ու մանուկներ են մարզվում տարբեր սպորտաձևերում: Պարբերաբար գրանցվում են նաև հաջողություններ ամենատարբեր մակարդակների մրցաշարերում՝ հպարտության զգացում բերելով համայնքի բնակչությանը:

Մարզական կյանքի առավել ակտիվացման և ավելի շատ մասնակիցների ներգրավման հարցերում, թերևս, **երիտասարդների շրջանում մոտիվացիայի** պակաս չկա: Կա միայն **մասնագետների պակասի խնդիր**. շատ մարզաձևերում համայնքում բացակայում է մարզչական կազմը (բոքս, ըմբշամարտ, բասկետբոլ և այլն): Եթե համայնքում ավելի մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատանքի, ավելի մեծ քանակությամբ պարապմունքների պահանջարկ ձևավորվեր, ապա այս խնդիրը ևս **հնարավոր կլիներ լուծել հրավիրյալ մարզիչների միջոցով**:

Բավականին ակտիվ երիտասարդական սպորտային կյանքին զուգահեռ՝ դժվար է պնդել, սակայն, թե համայնքի բնակչության շրջանում **առողջ ապրելակերպը** լայն տարածում ունի: Ինչպես ամենուր, մարդկանց կենցաղն ու վարքը Վայքում ևս նվազ շարժունակ է՝ մարդիկ ազատ ժամանակը շատ ավելի շատ են անցկացնում բազմոցին նստած՝ հեռուստացույցի կամ հեռախոսների էկրանների առջև, քան իրենց օրգանիզմի համար օգտակար որևէ զբաղմունք կատարելով: Սա իհարկե **հանրային առողջության տեսանկյունից** մտահոգիչ իրականություն է:

Համայնքի երիտասարդներն առանձնացնում են նաև այս հարցը, և Վայքի համայնքապետարանում ձևավորված նպատակադրում կա լուծումներ գտնել համայնքային **մարզական/սպորտային համալիրի** ստեղծման համար:

Վայքում համայնքային մարզահամալիրի ստեղծումը կարևոր է քաղաքացիների շրջանում ավելի առողջ և ակտիվ ապրելակերպի ձևավորման համար: Նման հաստատությունը բնակիչների համար կապահովի բազմաֆունկցիոնալ տարածք և կտրամադրի բազմակողմանի ծառայություններ տարբեր սպորտային և ժամանցային միջոցառումներով զբաղվելու համար՝ **նվազեցնելով մարդկանց նստակյաց վարքը** և նպաստելով ֆիզիկական առողջությանը:

Միևնույն ժամանակ, մասշտաբի էֆեկտով, համալիրը կմեծացնի սպորտային «շուկան» համայնքում, և երիտասարդների մարզական, սպորտային խմբերի, խմբակների և կազմակերպությունների համար շատ ավելի հեշտ կլինի **արհեստավարժ մարզիչ-մասնագետներ գտնելը**, հրավիրելը կամ պատրաստելը:

Կրկին, այս գաղափարը ևս կարիք կլինի քննարկել մյուս ծրագրերի հետ առավել կամ պակաս կարևորության/հրատապության համատեքստում:

Սցենար 4. Տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնի ստեղծում

Հայաստանի **բնակչությունը ծերանում է**: Սա մի երևույթ է, որը միայն մեր երկրին չէ բնորոշ: Բնակչության ծերացման չափերի մասին վիճակագիրները դատում են «ծերացման գործակից» ցուցանիշով: Ծերացման գործակիցը ներկայացնում է 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը՝ 15 տարեկանից ցածր 100 բնակչի հաշվարկով: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ եթե 2012 թվականին **Ծերացման գործակիցը** Հայաստանում կազմել է 78.4%, ապա 2022 թվականին արդեն՝ 94.8%: 10 տարում՝ աճ ավելի քան 16 տոկոսային կետով: Սա բնակչության ծերացման բարձր տեմպ է: Հանրապետական ընդհանուր միտումներից, ըստ էության, շատ չի տարբերվում իրականությունը Վայոց Ձորի մարզում, մասնավորապես Վայք խոշորացված համայնքում:

Տարեցների կյանքը հավուր պատշաճի կազմակերպելը կառավարման բոլոր մակարդակներում ավելի ու ավելի կարևոր հարց է դառնում Հայաստանում: Եվ սա առաջին հերթին վերաբերում է **համայնքային մակարդակին**:

Վայքի համայնքապետարանում ձևավորված նպատակադրում կա խթանել **տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնի** ստեղծումը համայնքում, և այս գաղափարը կարևորում են նաև համայնքի երիտասարդները:

Տարեցների հանգստի և խնամքի կենտրոնների առկայությունը համայնքներում վճռորոշ է **ծերացող բնակչության բարեկեցությանն** ուղղված խնդիրների լուծման համար: Նման կենտրոնները տարեցներին տարածք և միջավայր են ապահովում՝ խթանելով սոցիալական փոխգործակցությունը, կարող են առաջարկել էական օժանդակ ծառայություններ, ներառյալ **առողջապահական օգնությունը**, նաև կազմակերպել **տարեցների զբաղվածությունը**՝ ներգրավելով նրանց վարչական, ստեղծագործական և այլ տիպի աշխատանքներում:

Նման հաստատությունները առիթ են հանդիսանում **նաև երիտասարդության շրջանում կամավորության ինստիտուտի զարգացման** համար: Երիտասարդ կամավորների ակտիվ մասնակցությունը տարեցների ժամանցի կազմակերպման հարցում ոչ միայն էական ազդեցություն է ունենում նրանց համակողմանի, **ժամանակակից դաստիարակության, կայացման տեսանկյունից**, այլև այդ ընթացքում իրենք՝ երիտասարդներն են շատ բան սովորում և քաղում տարեցների կյանքի փորձից:

Այս իրապես կարիքահեն ծրագիրը **սոցիալական համերաշխության կերտման** օրինակ է և կարող է նաև ներառվել համայնքների համար արդեն իսկ պարտադիր դարձած՝ տարեկան աշխատանքային պլանի «Սոցիալական պաշտպանություն» բաժնում, ինչպես նաև հիմք հանդիսանալ նախատեսվող՝ համայնքի սոցիալական պլանի համար:

Այնուամենայնիվ, այս ծրագրի դեպքում ևս քննարկման մասնակիցները պետք է հիշեն, որ տարեցների կենտրոնների ստեղծումը ևս պետք է դիտարկել **այլ ծրագրերի հետ մեկ փաթեթի մեջ**՝ դրանց յուրաքանչյուրին տալով համապատասխան առաջնահերթություն:

Սցենար 5. Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնում

«... 12) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում.
Համայնքն ունի մտավոր մեծ ներուժ, սակայն համայնքում առկա է երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ, որի արդյունքում և աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մեծ մասն արտագնա աշխատանքի է մեկնում մայրաքաղաք կամ արտերկիր:»

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզ
Վայք համայնքի զարգացման 2022-2026 թվականների ծրագիր

Վայքի համայնքապետարանը մեծ կարևորություն է տալիս երիտասարդներին՝ հայրենի բնակավայրի հետ ամուր կապերով կապելու, հետևաբար, նաև **երիտասարդների զբաղվածության, աշխատանքի հարցերին**: Դա որպես գերակայություն ամրագրված է նաև համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագրում: **Աշխատելու, վաստակելու, անընդհատ զարգանալու և հետաքրքիր ու օգտակար ազատ ժամանակ անցկացնելու հնարավորություններ**. սա է երիտասարդին սեփական բնակավայրում պահելու ժամանակակից բանաձևը, և հենց այս բանաձևի բոլոր ուղղություններով են Վայքի զարգացման նպատակադրումները ներկայում:

Համայնքի երիտասարդներն անընդհատ են ընդգծում երիտասարդների զբաղվածության խնդրի կարևորությունը, և Վայքի համայնքապետարանում մտահղացում կա համայնքում ստեղծել **երիտասարդների զբաղվածության կենտրոն**: Երիտասարդների զբաղվածության կենտրոնը կծառայի որպես ռեսուրս կենտրոն՝ տրամադրելով **կարիերայի խորհրդատվություն, հմտությունների զարգացման ծրագրեր և աշխատանքի տեղավորման ծառայություններ, տեղեկատվություն Վայքի գործատուների, առցանց աշխատանքի հնարավորությունների** մասին, նաև սկսնակների համար **պրակտիկայի հնարավորություններ**: Ստեղծելով նման կենտրոն՝ համայնքը կարող է նպաստել երիտասարդների գործազրկության նվազեցմանը և **երիտասարդ սերնդի համար ավելի խոստումնալից ապագա ստեղծելուն**:

Երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակը բազմաթիվ պատճառներ ունի, սակայն դրանցում կարևոր է նաև հենց իր՝ **երիտասարդի սխալ կողմնորոշվելը**: Երիտասարդները հաճախ նորաձևության հետևից են ընկնում և սխալ են պատրաստվում՝ բավարարելու աշխատաշուկայի իրական պահանջարկը: Ճիշտ ուղղորդումը շատ կարևոր է, ինչի համար նաև **մասնագիտական կողմնորոշման ծառայություններ** են հարկավոր, որոնք նաև կվերապատրաստեն երիտասարդներին:

«Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնում» ծրագիրը քննարկելիս ևս հորդորում ենք այն դիտարկել մյուս ծրագրերի հետ մեկ համատեքստում, որպեսզի քննարկման ավարտին հնարավոր լինի պատասխանել հարցին՝ **«Որի՞ց սկսել»:**

Անշուշտ բացի քննարկման դրված ծրագրային գաղափարներից (սցենարներից) մասնակիցները կարող են առաջ քաշել բոլորովին նոր գաղափարներ և հիմնավորել դրանց անհրաժեշտությունը:

4. Վայքի համահամայնքային երիտասարդական քննարկումը

Վայքի համահամայնքային քննարկումն արդյունավետ էր ոչ միայն քննարկման որակի առումով, այլև որպես երևույթ երիտասարդների ձայնը լսելի դարձնելու տեսանկյունից: Մասնակիցները ոչ միայն ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն ունեցան, այլև տեղում տեսան, որ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներն իրենց հետ հավասար լուծումներ են փնտրում և քաջալերում: Քննարկումը ընդգրկուն էր, ներառական և իսկապես ոգևորող:

Լավ մտածված քննարկման նյութը և փորձառու սեղանավորները կարողացան ապահովել, որ շուրջ 2.5 ժամ երիտասարդներն ու ավագ սերնդի ներկայացուցիչները կտրվեին իրենց առօրյայից և ամբողջովին մտնեին Վայքի երիտասարդներին հուզող խնդիրների դաշտ, միասին առաջնահերթություններ սահմանեին և արդյունավետ լուծումներ առաջարկեին: Առաջին, երկրորդ և հինգերորդ սցենարները մասնակիցների կողմից այնքան շատ կարևորվեցին քննարկման ընթացքում, որ մինչև քվեարկության ավարտը ոչ ոք չէր կարող կանխատեսել, թե հատկապես որ սցենարն առավելագույն քվե կհավաքի:

«*Վայքի երիտասարդների մեծ խմբեր կարելի է միավորել հենց համայնքի զարգացման գաղափարի շուրջ*»,- պնդում էր քննարկման թեժությունից ոգևորված մասնակիցներից մեկը՝ քննարկման փաստն ինքնին դիտարկելով որպես միավորող գործոն: Երիտասարդներն ու մեծերը իրենց մաս էին զգում ինչ-որ մեծ գործընթացի, և դա նրանց վստահություն էր ներշնչում: Երեկոյան, երբ քննարկումը վաղուց ավարտվել էր, մարդիկ չէին շտապում հեռանալ սրահի տարածքից, այլ խումբ-խումբ կանգնած սրահի բակում դեռ հարցեր էին քննարկում օրվա թեմայի շրջանակներում:

Քննարկման ընթացքը և հնչած մտքերի արձանագրումն ապահովեցին պատրաստված սեղանավարներն ու գրառողները, որոնք ողջ ընթացքում գործեցին իրենց համար մշակված ցուցումների շրջանակում **(տես Հավելված 2):**

4.1. Վայքի համահայնքային քննարկման արդյունքներն՝ ըստ սցենարների

Վայքի քննարկման ընթացքում արհեստավարժ գրառողների կողմից արձանագրվել է մասնակիցների ավելի քան 350 դիտարկում: Քննարկման դրված նյութի և դիտարկումների համառոտ ամփոփումը կոնկրետ ծրագրերով ունի հետևյալ պատկերը.

Սցենար (ծրագիր 1). Մշակութային կետերի ստեղծում համայնքի խոշոր բնակավայրերում - *կողմ՝ 39%*

- *Մեր երիտասարդները կօգտվեն նման մշակութային կետերից. շատ լավ առաջարկ է: Ես կողմ եմ՝ երիտասարդներն ու երեխաները կմնան իրենց բնակավայրերում ու համայնքն էլ կզարգանա:*
- *Մենք՝ աշակերտներս, գյուղում պետք է ունենանք երգի, պարի, շախմատի, նկարչության խմբակների հնարավորություն՝ այդ նպատակով Վայք չհասնելու համար:*
- *Կարևորը հիմա մանկապարտեզն է ու դպրոցը, որ չփակվի, իսկ մշակույթի տունը երկրորդական է:*

Համայնքի բնակավայրերում մշակութային կետեր հիմնելու գաղափարը ամենաշատ աջակցությունը ստացավ քննարկման մասնակիցների կողմից: Երիտասարդներն ու ավագները հիմնականում կարևորում էին **երիտասարդների զբաղմունքի հարցը գյուղերում**, ինչի համար մշակութային կյանքի ակտիվացումը կարևոր նշանակություն կունենա: Միաժամանակ մասնակիցների կողմից հնչեցին մտքեր, որ նման կենտրոնները կարող են ծառայել նաև 3-րդ և 4-րդ ծրագրերում առաջ քաշված խնդիրների լուծմանը, հետևաբար այս գաղափարը կարող է ավելի **համակարգային նշանակություն** ունենալ և նպաստել առողջ ապրելակերպի ու տարեցների ժամանցի կազմակերպման խնդիրների լուծմանը մեկ վայրում: Թերևս հենց քննարկման ընթացքում ծնված այս միտքն էր, որ նպաստեց առաջին ծրագրի «հաղթարշավին»:

Սցենար 2. Ներհամայնքային տրանսպորտային երթուղիների ստեղծում- *կողմ՝ 23%*

- *Մեր գյուղերը մահանում են՝ միայն տրանսպորտի և ճանապարհների պատճառով:*
- *Ես համաձայն եմ մշակույթի տանը, գրադարանին, բայց եթե ճանապարհը դեպի գյուղ անհասանելի է, ինչի՞ մասին ենք խոսում, առաջինը սա՛ պետք է լուծենք:*
- *Վայք հասնելու համար գյուղից հիմնականում գալիս ենք պատահական մեքենայով, բայց դա տղաները կարող են անել, աղջիկները չեն կարող: Ո՞նց կարող է աղջիկը ժամերով դրսում կանգնի, մինչև մի պատահական մեքենա գա ու բերի Վայք:*

Քննարկման առաջին րոպեներից արդեն պարզ էր, որ համայնքի բնակավայրերի միջև կանոնավոր տրանսպորտի բացակայությունը Վայքում ամենացավոտ հարցերից մեկն է: Տրանսպորտային խնդիրների բացասական հետևանքների մասին առանձին մասնակիցների անհատական պատմությունները այնքան համատարած ու ցավոտ էին, որ ընթացքում արդեն կասկած չկար, որ սցենար 2-ը վերջում լինելու է գերակշիռ մեծամասնության համար թիվ մեկ գերակայությունը: Այսպես չեղավ՝ ի զարմանս բոլորիս: «Իսկ ինչու՞ այդպես չեղավ» հարցի պատասխանը մասնակիցների կարծիքների հետագա մանրազնին դիտարկման մեջ էր: «*Գյուղն ուզում ենք զարգացնել, բայց գյուղից երեխեքին բերում ենք կենտրոն: Տենց գյուղ չի զարգանա*»,- մասնակիցներից մեկի այս և այլոց նմանօրինակ այլ կարծիքների խորքում **թաքնված վախեր** կան: Վերջնական որոշման ժամանակ մարդիկ գերադասեցին ձայն տալ այնպիսի ծրագրերի, որոնք **երիտասարդներին կկապեն գյուղին** և իրենց քվեարկությամբ ծածուկ վախ արտահայտեցին լավ ճանապարհների ու քաղաքին հեշտ կապվելու գաղափարին, որի մեջ երիտասարդներին «կորցնելու» վտանգ տեսան: Սա իհարկե սուբյեկտիվ, երկարաժամկետ առումով ոչ արդյունավետ մտորում է թվում, բայց փաստ է, որ այն կա:

Սցենար 3. Համայնքային մարզական/սպորտային համալիրի ստեղծում - *կողմ՝ 13%*

- *Սպորտով զբաղվել եմ, բայց պայմաններ չկան պրոֆեսիոնալ զբաղվելու համար: Օրինակ Վայքի բոքսի կենտրոնը փակեցին տարան Երևան:*
- *Սպորտային համալիրի կառուցումը անհրաժեշտություն է, ապրում ենք պատերազմող երկրում, սա անհրաժեշտություն է տղա երեխաների համար:*
- *Ես մեծ հաճույքով կայցելեի ֆիթնեսի, բայց բացարձակ ոչ մի տարբերակ չկա կանանց համար:*

Համայնքային մարզական/սպորտային համալիրի ստեղծման գաղափարը ողջունեցին քննարկման գրեթե բոլոր մասնակիցները: Բոլորը հիմնավորեցին դրա կարևորությունը և իրենց պատրաստակամությունն ավելի ակտիվ սպորտային կյանքով ապրելու՝ նման կենտրոնի գոյության դեպքում: Անընդհատ շեշտվում էր **հատկապես կանանց և աղջիկների**՝ սպորտով զբաղվելու **նվազագույն հնարավորությունների կամ դրանց իսպառ բացակայության** մասին: Այս հարցում քննարկման ոգին լավագույնս արտացոլված է մասնակիցներից մեկի այս դիտարկման մեջ.- «*Վայք խոշորացված համայնքի երիտասարդների շրջանում մեծ հետաքրքրվածություն կա սպորտի նկատմամբ՝ երիտասարդները չեն թափառի, հեռախոսներից կկտրվեն: Եթե մենք էլ պայմաններ ունենայինք, հաստատ Վայքն էլ Գյումրու նման կտար փառահեղ մարզիկներ, աշխարհի և օլիմպիական չեմպիոններ, հանրահայտ դերասաններ ու մշակույթի գործիչներ*»:

Սցենար 4. Տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնների ստեղծում- *կողմ՝ 0%*

- *Գիտեմ, որ այլ մարզերում կան տարեցների խնդիրներով զբաղվող կենտրոններ. այնտեղ մարդիկ հավաքվում, նարդի-շաշկի են խաղում: Կարելի է ստեղծել կենտրոններ, որտեղ և՛ հոգեբանական աջակցություն կցուցաբերեն, և՛ տարեցների զբաղվածությունը կապահովեն:*
- *Շաբաթվա մեջ մեկ օր ես կգնայի հաստատ տարեցների խնամքի կենտրոնում կամավորություն անելու:*
- *Եկեք մի կողմ դնենք տարեցների խնամքի կենտրոնների հարցը: Ոչ մի վայքեցի իր ծնողին թույլ չի տա գնալ որևէ ընդհանուր ճաշարանից օգտվի: Սա առաջին հերթին արժանապատվության հարց է, և հետո նոր՝ կարիքի:*

4-րդ սցենարը ստացավ զրո քվե: Ոչ ոք առաջնահերթություն չտվեց այս ծրագրին: Թեպետ շատերը դրական ու կարևոր համարեցին այս գաղափարը, սակայն սրահում տիրապետող էր այն մտորումը, որ նման հաստատությունը **վայել չէ Վայքի ավանդույթներին**, տարեցներին սեփական տանը «տիրություն անելու»՝ երիտասարդների պարտականությանը: *«Երիտասարդ սերունդը պարտավոր է տեր կանգնել ծերերին, ոչ թե ստեղծվեն նման կենտրոն»*,- համարում էր մասնակիցներից մեկը: Կարող ենք համաձայնել կամ ոչ նման դիտարկումների հետ, բայց փաստ է, որ ծրագրային այս հինգ ուղղությունների փաթեթում տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնների ստեղծման գաղափարը, որպես առաջնահերթություն, ստացավ զրո ձայն:

Սցենար 5. Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնում - *կողմ՝ 13%*

- *Ես հիմա մասնագիտություն եմ փորձում ընտրել, լավ կլինի, որ երիտասարդական կենտրոն լինի, մասնագիտական կողմնորոշման ծրագրեր լինեն:*
- *Իմ կարծիքով սա կաշխատի Վայքում: Մենք ունենք շատ ուսանողներ՝ սովորում գալիս են ու աշխատանք չունեն: Տղաները մնում են քաղաքում ու ամեն տեսակ աշխատանքով են զբաղվում, բայց ոչ մասնագիտությամբ:*
- *Երիտասարդ չի մնացել, որ իրենց համար զբաղվածության կենտրոն ստեղծենք: Գնացել են բոլորը...*

Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնումը մեծապես կարևորվեց քննարկման մասնակիցների կողմից: Նման ծրագրի ներքո երիտասարդներն ու ավագները հնարավորություն տեսան, որ այն գոնե ինչ-որ կերպ կարող է նպաստել երիտասարդների համար կարևորագույն խնդրի լուծմանը՝ սեփական բնակավայրում **աշխատանք** ու իրենց մասնագիտությամբ **զարգանալու** հնարավորության ստեղծմանը: *«Առաջինը պետք է երիտասարդների աշխատատեղերի հարցը լուծել: Հենց այդ հարցը լուծվեց, նրանք համայնքը չեն լքի: Ով որտեղ ծնվել է, էնտեղ կմնա, կշենացնի»*,- վստահ էր մասնակիցներից մեկը:

4.2. Սոցիալական երկխոսությունը երիտասարդների և մեծահասակների միջև

Բազմաթիվ եզրահանգումներ կարելի է անել համահամայնքային քննարկման արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում ստացված անուղղակի՝ միջնորդավորված սոցիալական երկխոսության վերաբերյալ երիտասարդների և մեծահասակների միջև: Օրինակ՝ Սցենար 1, 3 և 5-ի քննարկումների հիմքում մասնակիցները մշտապես դնում էին **երիտասարդներին գյուղում պահելու**, գյուղին կապելու կարևորությունը: Սակայն, մի տարբերություն է անընդհատ նկատվում կարծիքներում՝ երիտասարդներն ավելի լավատես են իրենց դիտարկումներում՝ այս ու այն խնդիրը լուծենք, որ երիտասարդները կարողանան ինքնադրսևորվել գյուղում: Երիտասարդների շրջանում խնդիրների լուծման կարևորության ընդգծումը մեծ մասի մոտ «հոգուտ», «ի նպաստ» սկզբունքով է՝ հոգուտ մնալու, ի նպաստ սեփական գյուղում հաջողության հասնելու: Մեծահասակների մոտ արձանագրվում էր ավելի մեծ հոռետեսություն՝ «բոլոր երիտասարդները գնացել են», «միևնույն է, գնալու են» տրամադրություններով:

Երիտասարդների՝ գյուղը լքելու մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Եթե ժամանցային կենտրոններ, մշակութային տուն և աշխատատեղեր լինեն, երիտասարդները չեն գնա գյուղերից: Գյուղը ուզում ենք զարգացնել, բայց գյուղից երեխեքին բերում ենք կենտրոն: Տենց գյուղ չի զարգանա: Գյուղը եկեղեցի, խաչքարեր և շատ հետարքրիր վայրեր ունի, տեղեկատվական կենտրոն ստեղծենք, որ տուրիստների բերենք ծանոթացնենք գյուղը զարգացնենք:	Երիտասարդ չի մնացել, որ իրենց համար զբաղվածության կենտրոն ստեղծենք: Գնացել են բոլորը... Մեր երեխաները չունեն մոտիվացիա հետագայում գյուղ վերադառնալու և գյուղում իրենց մասնագիտությամբ աշխատելու համար: Այսօր երիտասարդը հող չի մշակում, նա ձգտում է գնալ Երևան ու չոր գումար աշխատել բանվոր աշխատելով, քան տանջվի հող մշակի, որ հետո կարկուտ գա կամ այլ մի բան ու ամեն ինչ փչանա:

Մոտեցումների տարբերություն կարելի է արձանագրել նաև, օրինակ, **տարեցների խնամքի/ժամանցի կազմակերպման հարցերում**: Եթե երիտասարդների մեջ ավելի մեծ տոկոս են կազմում նրանք, ովքեր դրական են արտահայտվում տարեցների առօրյան կազմակերպելու հարցում, կամավորության պատրաստակամություն են հայտնում, ապա ավագ սերնդի մասնակիցների մեծ մասը, ընդհակառակը, կտրուկ է այս հարցում:

Տարեցների խնամքի/ժամանցի կենտրոնների մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Եթե խնամքի կենտրոն լիներ, ես իմ տատիկին անձամբ կբերեի այդ կենտրոն: Քանի որ եթե էն ժամանակ իջնում էի բակ, հիմա ամբողջ օրը տանն է: Շաբաթվա մեջ մեկ օր ես կգնայի հաստատ տարեցների խնամքի կենտրոնում կամավորություն անելու: Տատիկներին կարող ենք հավաքել կարևոր գաղափարի, օրինակ՝ զինվորների համար գուլպաներ գործելու շուրջ: Մենք՝ վայքեցի երիտասարդներս, պետք է գնանք, որպես կամավոր, գյուղերում բնակվող տարեցներին խնամենք, որը նաև կօգնի մեծահասակներին լսելու և սովորելու. մենք շատ բան ունենք իրենցից սովորելու: Տարեցների համար ժամանցի կենտրոնում մենք ընկերներով կգնենք շախմատ կխաղանք դպրոցից հետո:	Երիտասարդ սերունդը պարտավոր է տեր կանգնի ծերերին, ոչ թե ստեղծի նման կենտրոն: Այստեղ անարդարության խնդիր կառաջանա, եթե մեկի երեխան ավարտի ու գնա Երևան կոպիտ ասած ոտքը ոտքին քցած ապրի, իսկ մյուսները գյուղերում տարեցներ պահեն: Վայքում ծերանոցը կամ խնամքի կենտրոնը չի գործի: Նույնիսկ միայնակ ծերերը չեն գնա ծերանոց, ամոթի պատճառով: Այդ կենտրոնները չեն գործի. փոքր բնակավայր է, տարեցների զավակները կասեն, ամոթ է, չենք ուզում, որ քեզ ուրիշները օգնեն, չենք ուզում, որ տեսնեն, որ ձեզ ինչ-որ ձևով այլ ջահելներ օգնում են:

Սակայն, երիտասարդների և մեծահասակների մոտեցումները որոշ հարցերում երբեմն նաև համընկնում էին, մասնավորապես **երիտասարդների ժամանցին** վերաբերող հարցերում: Օրինակ՝ անկախ տարիքից, բոլոր մասնակցիները նշում էին, թե **բարձորակ բովանդակությամբ** ժամանցային միջոցառումները և **հարմարավետ միջավայրը** որքան կարևոր են երիտասարդին համայնքում պահելու, նրա բովանդակալից ժամանցը կազմակերպելու և նրա զարգացմանը նպաստելու համար: Թե՛ երիտասարդները, թե՛

մեծահասակները համամիտ էին, որ երիտասարդին վիրտուալ տարածքի, ներառյալ սոցիալական հարթակների ռիսկերից պաշտպանելու համար անհրաժեշտ է **«հեռախոսին» այլընտրանք** առաջարկել՝ տարբեր ուսուցողական խմբակների, կոլեկտիվ խաղերի, զբաղվածության տեսքով:

Երիտասարդների ժամանցի մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Մեր Վայք համայնքում՝ Վայքում, կա մի հին գրադարան: Ես տասներկուերորդ դասարանում եմ սովորում ու գրքասեր եմ, ինձ համար կարևոր չէ միջավայրը, ես կարդում եմ, բայց նոր ընթերցողներ ներգրավելու համար, կարծում եմ, միջավայրը կապ ունի: Միջավայրը պետք է վանող չլինի: Ես, որպես աշակերտ, կարծում եմ, որ մեր Վայք համայնքում մշակույթի տան գաղափարը շատ կարևոր է: Ես յոթ տարի հաճախել եմ և նկատել եմ, որ շրջակա գյուղերից էլ էին երեխաներ գալիս, բայց շատ խանգարող հանգամանքներ կային, որ սահմանափակում էին իրենց մասնակցությունը: Կրթությունը ոչ միայն դպրոցում պետք է լինի, այլև մշակույթի մեջ: Վայքի մշակույթի տունն ինձ համար կրթվելու և դաստիրակակվելու վայր է, տնից դուրս գալու մոտիվացիա, շփվելու տարեկիցների հետ, և օգնում է նույն և տարբեր բնակավայրերի բնակիչներին իրար ճանաչելու, նաև մշակույթին (օրինակ՝ երաժշտությանը) ծանոթանալու: Վայք խոշորացված համայնքի երիտասարդների շրջանում մեծ հետաքրքրվածություն կա սպորտի նկատմամբ՝ երիտասարդները չեն թափառի, հեռախոսներից կկտրվեն: Մեծերը կարծում են, որ մշակույթն է կարևոր, իսկ երիտասարդների համար սպորտն է կարևոր, սպորտը համ էլ առողջարար է: Պիտի լինեն տարեցների համար նախատեսված կենտրոններ, որտեղ պիտի լինենք նաև մենք՝ երիտասարդներս, օգնենք լավ ժամանց անցկացնելու՝ իրենց հետ շփվելով, զրուցելով, սեղանի խաղեր խաղալով: Տարեցների համար ժամանցի կենտրոնում մենք ընկերներով կգնենք շախմատ կխաղանք դպրոցից հետո:	Ազատեկ համայնքում, եթե դեր տրվի երիտասարդին, ապա նրանք կոգևորվեն և կիրականացնեն գրադարանի ակտիվ գործառույթը: Գրադարանն է միավորում երիտասարդներին, տարբեր գրքերի շուրջ հետաքրքիր քննարկումներ են լինում, կարծում եմ շատ օգտակար կլինի դպրոցն ու մշակույթի տունը՝ իր գրադարանով, համագործակցեն: Գիտեք, երբ երեխան ու երիտասարդը զբաղմունք չունեն, ու մշակույթի կենտրոն չկա, որտեղ իր ընկերները հաճախում են ու այլ միջավայր են տեսնում, սկսում են զբաղվել ոչ առողջ գործունեությամբ՝ բլոտ են խաղում, ծխում են, խմում են, այլ, ոչ ճիշտ կյանքով են ապրում: Ներկայացումները, մշակութային միջոցառումները պիտի շատ բարձր մակարդակի լինեն, որ երիտասարդներին գրավեն, հեռախոսներից կտրեն: Քաղաքում պատվավոր տարեց արհեստավորներ ունենք. խառատ, մետաղագործ: Բայց իրենց արհեստը հիմա անտեսված է, ջահելները չեն ուզում նրանցից որևէ բան սովորել: Իրենք Տիկ-տոկով են տարված: Բայց այդ մարդիկ շատ բան կարող են ջահելներին սովորեցնել: Կասե՞ք ինչպես եղավ, որ սովետի ժամանակ կային պայմանները, և բոլոր երիտասարդները զբաղվում էին սպորտով ու մշակույթով, իսկ հիմա հետաքրքիր չի լինի. ավելի լավ է լցնել երիտասարդների օրը ամեն ինչով, քան թե թողնել, որ ամբողջ օրը ինտերնետից դուրս չգան ու շահումով ինչ-որ կայքերում դժվար վաստակած գումար վատնեն:

Երիտասարդներն ու մեծահասակները համակարծիք են նաև Վայքում **երիտասարդների զբաղվածության** խնդրի և դրա լուծումների հարցում: Նրանք կարևորում են՝ (ա) համայնքում որոշակի մասնագիտություններով սովորելու համար հնարավորությունների ստեղծումը, (բ) հենց համայնքում համայնքին անհրաժեշտ մասնագիտություններ ձեռք բերելու հնարավորությունները և (բ) համայնքում

երիտասարդին մոտիվացնող գործոնների, ինչպիսիք են՝ մեկ ընդհանուր նպատակի, ժամանցի, բարվոք և առողջ կյանք վարելու հնարավորությունների առկայությունը:

Երիտասարդների զբաղվածության մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Երիտասարդների հիմնական մասը ձգտում է գնալ Երևան կամ արտասահման՝ չտեսնելով ապագա իրենց համայնքում: Երիտասարդներին պետք է մնալու մոտիվացիա, օրինակ՝ ես՝ որպես ապագա ճարտարապետ, պիտի ունենամ մասնագիտությամբ աշխատելու հնարավորություն՝ իմ համայնքին օգտակար լինելու համար: Այսօր գյուղում այս ամեն ինչն էլ պետք է ու շատ շտապ. մենք սահմանապահ ենք, մենք զինվոր ենք, եթե մենք գնանք, ի՞նչ է լինելու: Իմ ցանկությունն էն ա, որ նենց հնարավորություններ լինեն, որ ես համայնքից չգնամ: Ապագա թարգմանչուհի եմ՝ անգլերեն-հայերեն, իսպաներեն-գերմաներեն, մնամ համայնքում ի՞նչ աշխատեմ: Մասնագիտական կրթություն ստանալուց հետո պիտի ունենանք համայնք վերադառնալու մոտիվացիա, համայնքի տարբեր խնդիրներ լուծելու համար համախմբվելու վայր:	Շատ երիտասարդներ ուզում են որոշակի մասնագիտություն ստանալ, բայց էստեղ դա չեն սովորեցնում: Այսօր երիտասարդը հող չի մշակում, նա ձգտում է գնալ Երևան ու չոր գումար աշխատել՝ բանվոր աշխատելով, թե չէ տանջվի, հող մշակի, որ հետո կարկուտ գա կամ այլ մի բան, ու ամեն ինչ փչանա՞: Որ գործ լինի, բոլորն էլ հետ կգան: Սպորտ, արվեստ, էդ ամեն ինչը լավ է, բայց գործ պիտի լինի առաջին հերթին: Մենք ունենք շատ ուսանողներ՝ սովորում գալիս են ու աշխատանք չունեն: Տղաները մնում են քաղաքում ու ամեն տեսակ աշխատանքով են զբաղվում, բայց ոչ մասնագիտությամբ: Մեր երեխաները ուզում են դառնալ բժիշկ, իրավաբան, բայց գյուղում իրենք նման մասնագիտությամբ աշխատանք չունեն: Առաջինը պետք է երիտասարդների աշխատատեղերի հարցը լուծել: Հենց այդ հարցը լուծվեց, նրանք համայնքը չեն լքի: Ով որտեղ ծնվել է, էնտեղ կմնա, կշենացնի:

Ոչ միանշանակ երկխոսություն էր ստացվել երիտասարդների և մեծահասակների միջև՝ պայմանավորված **երիտասարդների սեռով**, մասնավորապես **հանրային տարածքներում սոցիալապես ընդունելի վարքագծի, որոշակի տնտեսական գործունեությամբ** և **սպորտով զբաղվելու** առումով: Մասնավորապես, և՛ երիտասարդները, և՛ մեծահասակները հիմնականում համամիտ էին, որ կան որոշ սպորտաձևեր, որոնք ավելի «հարիր» են աղջիկներին, քան տղաներին, օրինակ՝ մարմնամարզությունը: Այդուհանդերձ, մասնակիցներից մեկը նշում է՝ «*Վայքում կա աղջիկների ֆուտբոլի թիմ, անունը՝ «Արցախ»*», այն դեպքում, երբ ֆուտբոլը երկուստեք ընկալվում է որպես միանգամայն տղամարդկային սպորտաձև: Մասնակիցներից ոմանք նշում են, որ բացի այն, որ աղջիկների և կանանց համար «հարմար» մարզաձևերով զբաղվելու հնարավորություններ չկան համայնքում, առկա ծառայություններ մատուցողներն են պատրաստ չեն առաջարկվող հնարավորությունները հարմարեցնել՝ ըստ սեռի՝ «*Մեր մոտ չկա այն մենթալիտետը, որ սպորտային համալիրը կսահմանափակվի կանանց այցելության համար:*»

Աղջիկների և տղաների «ընդունելի» և «անընդունելի» վարքագծի մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Վայք հասնելու համար գյուղից հիմնականում գալիս ենք պատահական մեքենայով, բայց դա տղաները կարող են անել, աղջիկները չեն կարող:	Ո՞նց կարող է աղջիկը ժամերով դրսում կանգնի, մինչև մի պատահական մեքենա գա ու բերի Վայք: Ո՞նց կարող են աղջիկները գան բերք հավաքեն կամ խոտ հնձեն:

Ես Վայքում եմ սովորում, այստեղ կա սպորտային կենտրոն, բայց մասնագետի խնդիր կա: Շատերը չգիտեն, թե սարքերից ոնց օգտվեն: Իսկ աղջիկները ընդհանրապես չեն գնում, որովհետև կարծրատիպեր կան: Եթե քաջալերեն աղջիկներին կամ, օրինակ, կին մարզիչներ լինեն, մենք սիրով կգնանք, կմարզվենք, կուժեղանանք:

Գյուղում լինեն վոլեյբոլ, բասկետբոլ կամ նման խմբակներ ես հաճույքով կգնամ, նաև աղջիկները հաստատ կհաճախեն:

Ես մանկուց երազել եմ բոքսով զբաղվել, բայց բացի վոլեյբոլից ու բասկետբոլից աղջիկների համար ոչ մի ուրիշ սպորտային խմբակ չկա: Չունենք մարզիչ աղջիկների համար:

Մենք՝ երիտասարդներով բասկետբոլ ենք շատ սիրում: Կարատեի էլ ենք գնում: Եթե գիմնաստիկայի խմբակ լիներ, աղջիկները հաճույքով կգնային:

Աղջիկների համար ավելի քիչ հնարավորություններ կան, ավելի ճիշտ չկան: Լավ կլիներ, եթե լիներ լող, գիմնաստիկա, ֆիթնես...

5. Մասնակիցների հիմնական դիտարկումներն ու եզրահանգումները

Սցենար (ծրագիր) 1. Վայքի մշակույթի տան օրինակով՝ մշակութային կետերի ստեղծում համայնքի խոշոր բնակավայրերում

- Մեր երիտասարդները կօգտվեն նման մշակութային կետերից. շատ լավ առաջարկ է: Ես կողմ եմ՝ երիտասարդներն ու երեխաները կմնան իրենց բնակավայրերում ու համայնքն էլ կզարգանա:
- Սկզբի համար առաջարկում եմ, որպեսզի մի քանի մոտ գյուղեր մեկ կենտրոն ունենան:
- Մշակույթի տները հնարավորություն կտան, որ երիտասարդները դուրս չգան համայնքներից:
- Ազատեկի մշակույթի տունը ոչնչացված է, Ազատեկի երիտասարդությունը զբաղմունք չունի, ինչի պատճառներից մեկը հենց մշակույթի տան ոչնչացումն է: Ազատեկում խիստ կարևոր է մշակույթի տուն ունենալու հարցը:
- Ի՞նչ մշակույթի տան մասին ենք խոսում, եթե հիմա նույնիսկ դպրոցներն են վերացնում համայնքներում:
- Մեր համայնքում կա մի հին շինություն, որը մենք մեր միջոցներով թեթև վերանորոգել ենք՝ հին պատուհաններ ենք դրել, ջեռուցում ենք, ու երեխաների հոսքն այդտեղ չի դադարում:
- Խնձորուտ համայնքում արդեն իսկ կազմակերպում են մշակութային այցելություններ դեպի պատմամշակութային վայրեր: Իսկ Հերհեր համայնքում կահավորվել և տրվել է տարածք, սակայն գործընթացը չի շարունակվել:
- Նույնիսկ Վայքի մշակույթի տանը կա մոտ 17 հաստիք, սակայն միայն մեկն է կապված մշակույթի հետ:
- Մշակութային կյանքի գոյությունը կարող է նպաստել, որպեսզի երիտասարդների կյանքն աշխուժանա:

- Ավագ սերնդի ներկայացուցիչ՝ մշակույթի տունը մեր համար եղել է դաստիարակվելու վայր, կուզեմ երիտասարդների համար էլ նույնը դառնա:
- Ազատեկ համայնքում, եթե դեր տրվի երիտասարդին, ապա նրանք կոգևորվեն և կիրականացնեն գրադարանի ակտիվ գործառույթը:
- Մեր վայք համայնքում՝ Վայքում, կա մի հին գրադարան: Ես տասներկուերորդ դասարանում եմ սովորում ու գրքասեր եմ, ինձ համար կարևոր չէ միջավայրը, ես կարդում եմ, բայց նոր ընթերցողներ ներգրավելու համար, կարծում եմ, միջավայրը կապ ունի: Միջավայրը պետք է վանող չլինի:
- Եթե հնարավորություն կա ընդլայնելու և ունենալու մշակութային կենտրոններ նաև գյուղերում, շատ լավ կլինի: Իսկ եթե ոչ, ապա տրանսպորտի հարցը պետք է լուծել, որ գան կենտրոն:
- Ես, որպես աշակերտ, կարծում եմ, որ մեր Վայք համայնքում մշակույթի տան գաղափարը շատ կարևոր է: Ես յոթ տարի հաճախել եմ և նկատել եմ, որ շրջակա գյուղերից էլ էին երեխաներ գալիս, բայց շատ խանգարող հանգամանքներ կային, որ սահմանափակում էին իրենց մասնակցությունը: Կրթությունը ոչ միայն դպրոցում պետք է լինի, այլև մշակույթի մեջ:
- Եթե կենտրոնացնենք ամբողջը Վայքում, բա գյուղե՞րն ինչ անեն, ո՞նց զարգանան:
- Գյուղերում նաև փոքր ժամանցի կենտրոններ պետք է լինեն:
- Վայքի մշակույթի տունը տվել է ինձ հիմնավոր կրթություն, որպես մասնագիտություն շարունակելու համար, ինչի հնարավորությունը չունեն հարակից գյուղերում:
- Շատ կհետաքրքրի մշակույթի տան գոյությունը, եթե դա չլինի որևէ մեկի սեփականությունը:
- Ես շուտով տեղափոխվելու եմ Երևան սովորելու համալսարանում ու ցավով պետք է նշեմ, որ ես ու իմ հասակակիցները հնարավորություն չեն ունեցել օգտվելու որև խմբակից:
- Մեր խոշորացված համայնքի գյուղերում նախկինում ունեցել ենք մշակույթի տներ, բայց ֆինանսական խնդիրներն այնքան շատ են, որ հիմա դրանց շահագործումը բարդ գործ է: Համայնքն այս պահին չունի հնարավորություն վերականգնելու դրանք:
- Պետք է մշակույթի տունը չլինի ձևական, այլ լինի բարձր մակարդակով ուսուցման վայր լինի, ոչ թե դառնա «բեսեդկա» երիտասարդ տղաների համար:
- Վայքը հորինված քաղաք է, Զառիթափը պետք է կենտրոնը լիներ:
- Ավագ ներկայացուցիչ՝ գրադարանն է միավորում երիտասարդներին, տարբեր գրքերի շուրջ հետաքրքիր քննարկումներ են լինում, կարծում եմ շատ օգտակար կլինի դպրոցն ու մշակույթի տունը՝ իր գրադարանով, համագործակցեն:
- Վայք համայնքը մասնագետների առումով համալրված է: Եթե նեղ մասնագետների կարիք լինի, մենք կարող ենք շրջակա համայնքներից հրավիրել:
- Հեռավորությունը դեպի մշակույթի տուն այնպիսին է, որ հնարավոր չէ երեխաներին ուղարկել, ճանապարհը հին է, չվերանորոգված ու անանցանելի:
- Ազատեկ գյուղում ունենք անչափ շնորհալի երեխաներ, այս հարցը արհեստական չէ: Եթե ծնողը հնարավորություն չունի երեխային, երիտասարդին տեղափոխել կենտրոն մշակույթից օգտվելու, ապա երեխան ոչնչից չի օգտվում:
- Զեդեայում չկա որևէ ժամանցային կենտրոն, զբաղմունք չունեն երիտասարդները: Դպրոցներն էլ որ միացնում են, ստիպված գալիս են Վայք:
- Ազատեկում ևս կա հին մշակույթի տուն, նոր տան հարցը հաճախ բարձրացնում ենք համայնքապետարանում, քանի որ ոչ բոլոր երեխաներն են կարողանում հաճախել Վայքի մշակույթի տուն:
- Համայնքները դատարկվում են, ինչ ուզում եք բացեք, բայց եթե մարդ չմնա, ով պետք է գնա: Նախ և առաջ պետք է նենց անել, որ մարդիկ չցանկանան հեռանալ համայնքից:
- Մշակույթի տնից կարևոր այսօր մանկապարտեզն է, որը շատ համայնքներում չկա:
- Ես, որպես աշակերտ, կցանկանայի մասնակցել մշակույթի տան շախմատի դասընթացներին, բայց չեմ կարողանում Բարձրաշենից հասնել այնտեղ գումարի և հեռավորության պատճառով:

- Եթե ժամանցային կենտրոններ, մշակութային տուն և աշխատատեղեր լինեն, երիտասարդները չեն գնա գյուղերից:
- Գիտեք, երբ երեխան ու երիտասարդը զբաղմունք չունի ու մշակույթի կենտրոն չկա, որտեղ իր ընկերները հաճախում են ու այլ միջավայր են տեսնում, սկսում են զբաղվել ոչ առողջ գործունեությամբ՝ բլոտ են խաղում, ծխում են, խմում են, այլ ոչ ճիշտ կյանքով են ապրում:
- Արին գյուղում ժամանակին եղել են խմբակներ ու մշակութային կյանք կար:
- Ես, երբ դպրոցական էի, իմ դասղեկը բացահայտում էր մեզ համար Վայոց ձորը, սակայն հիմա երեխաներին տանում են մարզից դուրս էքսկուրսիաներ:
- Մշակույթի տունը, եթե հնարավոր չէ բացել, կարելի է սկսել երիտասարդական տարբեր խմբակներից՝ կարուձև, դաշնամուր և այլն: Ամեն դեպքում մի բան պետք է բացվի, որպեսզի երիտասարդները ազատ ժամանակ ինչ-որ բանով զբաղվեն:
- Գյուղի դպրոցում փորձել ենք ստեղծել մշակույթի անկյուն, գնել ենք գործիքներ, բայց չունենք համապատասխան մասնագետ:
- Արին գյուղում ժամանակին բացի աշխատանքից ևս զբաղմունք կար՝ մշակութային միջոցառումներ, մրցույթներ էին կազմակերպվում:
- Մարտիրոսում կիսաքանդ շենք կա. առաջ գործում էր, հիմա՝ ոչ: Դա կարելի էր մշակույթի տուն սարքել: Մենք ղարաբաղցի ենք, հիմա այնտեղ ենք ապրում: Ջահելներով գնացել, մաքրում էինք այդ շենքը, բայց շատ գործ կա անելու:
- Սպորտային և արտադրպրոցական զբաղմունքները գյուղերում բացակայում է:
- Ի՞նչ անենք, թե մեր երեխաները գյուղում են ապրում, միգուցե մի լավ մշակութային գործիչ մեր գյուղից դուրս գա:
- Իսկ ինչո՞ւ պետք է էքսկուրսիաները տանեն միայն դպրոցները: Իսկ ընտանիքները՞:
- Ես որպես գյուղում ապրող երտասարդ ոչ ծխում եմ, ոչ խմում եմ, ոչ էլ այլ վատ գործունեությամբ եմ զբաղվում: Ես սիրում եմ սպորտով զբաղվել ու ոչ մի խոչնդոտ ինձ չի խանգարի: Խնդրում եմ գյուղական համայնքների երիտասարդներին չներկայացնել որպես խմող-ծխող:
- Միջնակարգ դպրոցի աշակերտները կարծում են, որ գյուղում պետք է ունենան երգի, պարի, շախմատի, նկարչության խմբակների հնարավորություն՝ այդ նպատակով Վայք չհասնելու համար:
- Նաև մշակութային ակումբների ապակենտրոնացում է պետք:
- Քանի որ երեխաները քիչ են համայնքներում, այդ իսկ պատճառով մենք նույնիսկ տարրական պարի ուսուցիչ չունենք, ինչի՞ մասին եք խոսում, ի՞նչ մշակույթի կենտրոն:
- Իմ երեխան Սերսից գալիս էր Վայք՝ պարի: Այդ օրը ծնողը գործից բացակայում էր, որ հասցներ երեխային պարապմունքի:
- Երիտասարդ՝ Վայքի մշակույթի տունն ինձ համար կրթվելու և դաստիրակակվելու վայր է, տնից դուրս գալու մոտիվացիա, շփվելու տարեկիցների հետ, և օգնում է նույն և տարբեր բնակավայրերի բնակիչներին իրար ճանաչելու, նաև մշակույթին (օրինակ՝ երաժշտությանը) ծանոթանալու:
- Պետք է շեշտը դնել փոքր գյուղերի վրա: Գյուղերում շատ հարցեր կան, այդ իսկ պատճառով բոլորը թողնում-գնում են:
- Գյուղերի 80 տոկոսն ունեցել է մշակույթի տուն, բայց հիմա չունեն: Մարտիրոս գյուղը 300 տեղանոց դահլիճով մշակույթի տուն ունի, չի գործում հիմա, բարձիթողի վիճակում է... Բայց այն պատմություն ուներ, Օֆելյա Համբարձումյանն էլ է այնտեղ ելույթ ունեցել:
- 4-5 երեխայի համար մանկավարժ պահելը մեծ բեռ է պետության համար, նույն ձևով կարող ենք կենտրոնացնել նաև մշակույթի տունը:
- Մեր՝ Հերհեր գյուղի, մշակույթի տունը շատ մեծ է, որի վերանորոգումը շատ թանկ է, մեզ դա պետք չի, ավելի լավ է, թող համայնքը մի երկու սենյակ հատկացնի, փոքր կենտրոն լինի:
- Մշակույթի տունը կարող է մի քանի գյուղի համար լինել, գոնե այն գյուղերի համար, որ 4-5 կիլոմետր են հեռու իրարից: Մշակութային միջոցառումների համար այդ տարբերակը հարմար կլինի:

- Եթե գյուղի մշակութային կետը բացվի դպրոցում, կնպաստի նաև դպրոցի զարգացմանը:
- Եթե կառավարությունը հետևողական չլինի, ինչ ցանկանում եք, բացեք, ինչ վերանորոգում ուզում եք, իրականացրեք, միևնույն է՝ իքս ժամանակ հետո ամեն ինչ կքանդվի:
- Հերհեր համայնքում ես երբ ուսուցիչ էի, կազմակերպում էի քայլարշավներ Վայոց սար, Բազմաղբյուր, Ս. Գևորգ և այլն: Եվ հիմա նույնպես, դպրոցները և ծնողները կազմակերպում են այցելություններ:
- Վայքի մշակույթի տան կրկնօրինակումը դժվար է, համայնքն էլ իր խնդիրներն ունի, միգուցե երիտասարդների համար դա կարևոր է, բայց հասուն մարդը հասկանում է, որ խմբակ բացելը, որը ունի մեկ սան ավելի վատ է, քան համայնքի համար այլ հարցի լուծումը:
- Մարտիրոս գյուղը սողանքի խնդիր ունի, սրտացավ վերաբերմունքի կարիք ունի: Դպրոց ունենք, նախակրթարան: Իսկ մանկապարտեզը Զառիթափում է...
- Մարտիրոսում գազ չկա, ջուր չկա, կամ ջրում են՝ չի լինում, կենցաղային պայմանները մարդն է ստեղծում:
- Երիտասարդ՝ մշակույթի տուն կամ առանձին խմբակներ հաճախելու համար պետք է մոտիվացիա, օրինակ՝ տարբեր սպորտաձևերի համար նոր սարքավորումներ, կահավորում, մարզիչը՝ ոգևորող, հանգստի համար նաև վայր լինի, օրինակ՝ սրճարան:
- Եթե ֆինանսական միջոցներ կան, ապա ուղղեք երիտասարդներին, երեխաներին հոգեբանական կրթություն տվեք ու հայրենասիրություն սերմանեք նրանց մեջ:
- Իրականում, մենք ենք կազմակերպում ու առաջարկում այն տեղերը, որոնք ուզում ենք այցելել: Առաջարկում ենք մեր գյուղի մոտ տեղերը, օրինակ՝ Վիմափոր եկեղեցին, առաջարկում ենք, ծնողները և ուսուցիչները համաձայնում են:
- Բարձրունին, Սերսը, Նոր Ազնաբերդն ու Խնձորուտը նաև սահմանապահ գյուղեր են, ես ուզում եմ, որ իրենց համար հնարավորություններ ստեղծվեն:
- Երիտասարդները, մշակույթի տան բացակայության պայմաններում, մեկ սենյակում ինքնուրույն կազմակերպում են քննարկումներ, դասընթացներ, կինոդիտումներ և դեբատներ՝ ընդհանուր զարգացվածության համար:
- Ես երեխայիս Ղարաբաղից բերել եմ Ազատեկ, որ ինչ-որ բան սովորի, եթե հիմա էլ Ազատեկի դպրոցն էլ փակեն, ես իմ երեխուն Վայք դպրոց չեմ բերելու: Թող չփակեն մեր դպրոցը:
- Ես պատրաստվում եմ համալսարան ընդունվել, բայց տխրում եմ, որ վերադառնալուց հետո մեր պահանջներին համապատասխան դժվար կլինի այստեղ աշխատանք գտնել:
- Շատ դեպքերում ուսանողները կրթություն են ստանում, որին համապատասխան անհնար է լինում մեր համայնքում որևէ աշխատանք գտնել:
- Ես աշխատում եմ մշակույթի դպրոցում՝ Վայքում, և ամեն անգամ զանգում եմ բնակավայրեր, այսպես ասած գյուղապետերին, որ երեխաներին բերեն մշակույթի տուն, բայց չեն կարողանում բերել, գումար չունեն:
- Վայքում ու գյուղերում ապրող արցախցի երեխաներից ոմանք հիմա հաճախում են մանկական ստեղծագործության կենտրոն: Բայց հիմա, օրինակ, կարատեն ավելի մոդայիկ է ջահելների մոտ:
- Կարևորը հիմա մանկապարտեզն է ու դպրոցը, որ չփակվի, իսկ մշակույթի տունը երկրորդական է:
- Առաջ բոլոր քաղաքները ժողովրդական թատրոն ունեին. նրանք չէին վարձատրվում, ցավոք: Հիմա ոչ ոք չի ուզում անվճար դերասանություն անել, խաղալ: Մարդիկ թատրոն չեն գալիս: Նախարարությունն էլ մեզ լավ չի նայում, գրադարանները մանկական գրքեր չեն ստանում... Մշակույթի տներն էլ փակվեցին:
- Տարիներ առաջ ես պարի խմբակի եմ մասնակցել Վայքում: Մեր խմբում ավելի շատ գյուղերից երեխաներ կային, ովքեր ավելի հաճույքով էին գալիս ու մասնակցում, քան մենք, որ մի քանի րոպե հեռավորության վրա էինք ապրում:
- Ներկայացումները, մշակութային միջոցառումները պիտի շատ բարձր մակարդակի լինեն, որ երիտասարդներին գրավեն, հեռախոսներից կտրեն:

- Թատերական մասնաճյուղի դեպքում հաճույքով կհաճախեմ, եթե լինի բազմազանություն, տարբեր խմբակներ: Կարծում եմ՝ մյուսներին էլ հետաքրքիր կլինի, ամեն մեկը կընտրի իր համար օգտակար ուղղություն:
- Վայքում մանկական ստեղծագործության կենտրոն կա, բայց ֆինանսներ չկան, որ մակարդակով միջոցառումներ անենք:
- Մենք գյուղում ունենք ձեռագործ արվեստի մասնագետ: Չնայած նման մասնագետը շատ բան կարող է տալ երիտասարդներին, չկան համապատասխան պայմաններ դասընթացների կազմակերպման համար:
- Բոլորը ոգևորված են, երեխաները սպասում են, մասնագետները ցանկանում են աշխատել, մնում է միայն կազմակերպել:
- Ես փոքրուց թատրոնով հետաքրքրված եմ, բայց արվեստն այստեղ զարգացած չէ... Եթե թատրոն լինի, կգնամ: Երիտասարդները հիմա Վայքում «Ինովարիում» ծրագիր են իրականացնում: Մենք ուզում ենք համայնքի համար հետաքիքիր միջոցառումներ իրականացնել այդ ծրագրի միջոցով:
- Ես հակված եմ մտածել, որ կարևոր է մշակույթի տան պայմանների բարելավումը, օրինակ՝ սպորտի խմբակի ստեղծումը կոնկրետ համայնքում:
- Եթե ինձ՝ որպես թատերական խմբակի վարիչի, մոտենան ու ցանկություն հայտնեն ներկայացման մեջ խաղալ, մասնակցել, շատ ուրախ կլինեմ: Բայց ցանկություն հայտնողները քիչ են:
- Ես, որպես երիտասարդ, խնդիր եմ տեսնում. միայն Վայքում են եղած միջոցառումները, բայց այլ բնակավայրերում ոչինչ տեղի չի ունենում: Պարբերաբար այնտեղ էլ պետք է, օրինակ, համերգներ կազմակերպել, եթե նույնիսկ մշակույթի տուն հնարավոր չէ ստեղծել:

Սցենար 2. Ներհամայնքային տրանսպորտային երթուղիների ստեղծում

- Ունենք ներհամայնքային տրանսպորտի խնդիր, իսկ միջհամայնքային կապի խնդիր չունենք:
- Տրանսպորտն ահռելի խնդիր է, այստեղ յուրաքանչյուր ծնող ինքն է հոգում իր երեխայի մշակույթի տուն, մանկապարտեզ, խմբակ հաճախելը:
- Եթե պատահական պետք է գաս Վայք, պետք է սպասես, թե ով կտանի:
- Տրանսպորտի հետ կապված հիմա մի քիչ լավ է, քանի որ ներքաղաքային տրանսպորտ կա, որն անվճար է:
- Պրոբլեմը ճանապարհն էլ է, ոչ միայն տրանսպորտը, սովետի ժամանակվանից ոչինչ արված չէ:
- Ես Թումոյում եմ աշխատում, ունենք, օրինակ, Նոր Ազնաբերդ բնակավայրից աշակերտ, ով իր հաշվին է գալիս:
- Երթուղին ճիշտ գծված է, ժամերն ու մեքենաներն են պետք ավելացնել:
- Եթե լինի ֆինանսական օգնություն, համայնքային բյուջեն կհերիքի տրանսպորտի զարգացման համար:
- Այսօր, եթե գյուղերում էլ լինի տրանսպորտային կապեր Վայքի հետ, կարող է նաև չաշխատել, որովհետև գյուղացիները սովոր չեն վճարելու տրանսպորտի համար:
- Ոչ բոլոր համայնքներն ունեն տրանսպորտի հասանելիություն: Մարդիկ կա՛մ պիտի տաքսի կանչեն, կա՛մ հարևանի մեքենայով գնան:
- Վայքում տրանսպորտը ժամով է աշխատում, եթե բաց թողնես կամ լրացուցիչ գործեր ունենաս, չես կարողանա անել:
- Եղեգնաձորում բոլոր գյուղերը կապված են մեկը մյուսի հետ, բայց Վայքում ոչ մի գյուղ կապված չի:
- Օրինակ, ես իմ անձնական մեքենան ունեմ, բայց եթե կանչում են Զիդի, ես չեմ գնում, որովհետև պետք է ուղղակի ժամ ու կես բարձրանամ:
- Եթե Ազատեկում դպրոցը փակեն, արդյո՞ք հասկանում են, թե ոնց պիտի տրանսպորտի հարցը լուծեն: Դպրոցը փակելով՝ գյուղը փակում են:

- Տրանսպորտային կապը էֆեկտիվ չի լինի, եթե այն չսուբսիդավորվի:
- Ուսուցիչների համար կան տաքսիներ, բայց դա գումարով է:
- Վայք հասնելու համար գյուղից հիմնականում գալիս ենք պատահական մեքենայով, բայց դա տղաները կարող են անել, աղջիկները չեն կարող:
- Մինչև այլ բնակավայրերում մշակույթի կենտրոնների ստեղծումը, ավելի կարևոր ենք համարում հնարավորություն տալ բնակավայրերի երիտասարդներին գալու Վայքի մշակույթի կենտրոն: Ավելի ենք կարևորում տրանսպորտային խնդիրների լուծումը:
- Ո՞նց կարող է աղջիկը ժամերով դրսում կանգնի, մինչև մի պատահական մեքենա գա ու բերի Վայք:
- Ոչ բոլոր գյուղերում, բայց որոշներում միջհամայնքային տրանսպորտն անվճար է:
- Փոռ համայնքում դպրոց չկա, համայնքի միջոցներով ամեն օր աշակերտներին տանում են հարևան Ազատեկի դպրոց:
- Ապահովված մարդը երթուղային տաքսի չի նստում, տրանսպորտից օգտվում են միայն մարդիկ, ովքեր ֆինանսապես ծայրահեղ վիճակում են:
- Առաջ որոշակի գյուղերից մինչև Վայքի մշակույթի կենտրոն գործում էր երթուղի, սակայն երեխաները նման տրանսպորտով այնքան են հոգնում, որ նպատակահարմար չի դառնում արդեն:
- Մեր համայնքում առաջնահերթ է տրանսպորտի խնդիրը, եթե դա կարգավորված լինի, մշակույթի տան խնդիրն ինքնաբերաբար կլուծվի:
- Տրանսպորտը մինչև մեր գյուղ հասնելը մոտ 4000-5000 դրամ է ուզում: Վայքից Երևան երկու հազար դրամ է, այսինքն, ավելի հեշտ է Երևան գնալ, քան մեր գյուղ Բարձրունի:
- Երեխաներն ապագա կտեսնեն գյուղում, եթե հնարավոր լինի տրանսպորտի միջոցով օգտվել նաև հարակից տարածքների մանկապարտեզներից կամ դպրոցներից:
- Մանկապարտեզի տարիքի երեսունհինգ երեխա ունենք, գյուղից բերում հասցնում են Վայք, հետո ուշանում են աշխատանքից, հետո էլ դաստիարակը զանգում նեղանում է, թե՝ արի երեխայիդ ժամին տար, իմ աշխատանքային ժամը վերջացել է: Լավ կլինի, մի քանի մոտ գյուղեր գոնե մեկ մշակույթի տուն, մանկապարտեզ ունենան, շատ հարցեր այսպես կլուծվեն:
- Մեկ այլ խնդիր էլ Եղեգնաձոր գնալն է, որ գնանք մարզպետարան որևէ հարց լուծենք, ավելի դժվար է:
- Ճաշ պատրաստելիս կարևոր է բոլոր բաղադրիչների առկայությունը: Նույն կերպ և այստեղ է՝ և՛ տրանսպորտն է կարևոր, և՛ մշակույթի տան հարցերի լուծումը:
- Ինձ համար ավելի կարևոր է տրանսպորտը, քան մշակութային կենտրոնները գյուղական բնակավայրերում, քանի որ ոչ բոլոր մասնագետները կան գյուղական բնակավայրերում: Ավելի լավ է տրանսպորտ ապահովենք, որ երեխաները գնան գան:
- Մեր գյուղում կան շատ շնորհալի երիտասարդներ, որոնք դուրս են մնում ցանկացած տեսակի հանդիպումներից կամ կրթությունից:
- Նախարարությունը գումար է տրամադրում, որ ուսուցիչներին տանենք ու բերենք: Բայց հո ամեն աշակերտի համար չի՞ կարող նախարարությունը կազմակերպի:
- Ազատեկն ու Վայքը մոտ են իրար՝ 7 կմ, դա իհարկե կարճ ճանապարհ է, բայց ձմռանը շատ վտանգավոր է լինում գնալ-գալը: Սա հաշվի առնելով՝ լավ կլինի հենց համայնքում հնարավորություններ ստեղծելը:
- Մենք ընկերուհիներով շրջում էինք գյուղերում և կազմակերպում տիկնիկային թատրոն երեխաների համար, որը մեծ հաջողություն ունեցավ: Խնդիրը միայն տրանսպորտն էր, որի համար էլ գումար էինք գանձում թատրոնի համար, քանի որ մեծ դժվարություն էր տեղափոխությունը:
- Մենք ճանապարհներ ունենք, երբ տաքսիստին ստիպված ենք վարձատրել կրկնակի, անգամ եռակի, քանի որ հրաժարվում են նման վատ ճանապարհով քշել:
- Կապ չունի ես մեքենա ունեմ, թե չէ, ես աշխատող եմ, ժամանակ չունեմ երեխայիս դպրոց տանելու, այնպես որ տրանսպորտային երթուղիներ պետք են, բայց պետք է սուբսիդավորվի պետության կողմից:

- Գյուղերում աշխատանք չկա, թող գյուղերում աշխատատեղեր լինեն, մնացածը մենք կստեղծենք:
- Ես համաձայն եմ մշակույթի տանը, գրադարանին, բայց եթե ճանապարհը դեպի գյուղ անհասանելի է, ինչի՞ մասին ենք խոսում, առաջինը սա՛ պետք է լուծենք:
- Տրանսպորտային միջոցների սղությունից տուժում են բնակավայրերի երիտասարդները, բնակավայրերի միջև տեղաշարժվելու հնարավորությունները քիչ են. աշխատում են հիմնականում տաքսիները, ճանապարհների որակի պատճառով էլ գները թանկ են:
- Եթե Սերսում ապրողը Վայքում մի գործ ունի, պետք է մեքենա գտնի, վարորդին սպասեցնի, մի քանի հազար դրամ վճարի: Իսկ տրանսպորտի առկայության դեպքում ծախսը մի քանի հարյուր դրամ կլինի:
- Կարմրաշեն համայնքում կա դպրոց երկու աշակերտով, 2026 թվականին պիտի փակվի, ու էդպես կարող ենք խաչ քաշել էդ գյուղի վրա:
- Ես Արտավանից եմ, բայց Վայքում եմ ուսանում: Շատ երեխաներ գյուղերում են ապրում, բայց ուզում են Վայքում երաժշտական դպրոց հաճախել կամ կրկնուսույցի մոտ գնալ: Ծնողներն են բերում քաղաք, ծանոթ մեքենաներ: Դա խնդիր է:
- Գյուղերում գործ չկա՝ կա՛մ անասնապահություն, կա՛մ այգեգործություն, կա՛մ դպրոցում աշխատանք: Մնացած բոլոր գործերով գյուղացիները ստիպված են ամեն օր Վայք հասնել:
- Նույնիսկ եթե կա ոչ շատ լավ վիճակում մեքենա, որով հնարավոր է երեխաներին տեղափոխել, օրենքները այնպիսին են, որ հնարավոր չէ թեկուզ դա օգտագործել. վարորդները չեն կարողանում նման մրցույթների մասնակցել կամ մարդատար մեքենա որպես օրինական աշխատացնել:
- Մեր գյուղերը մահանում են՝ միայն տրանսպորտի և ճանապարհների պատճառով:
- Եթե նույնիսկ մեքենաներ կան քաղաքից գյուղ, գյուղից քաղաք գնացող, ժամերը բոլորովին հարմար չեն երիտասարդների համար: Կրկնուսույցների մոտ պարապողները գալիս, ժամանակ են կորցնում քաղաքում՝ սպասելով մեքենային:
- Սարավան և Զեդեա համայնքներում չկան հիմնական դպրոցներ, այսինքն այս բնակավարներից եթե ուզում են ավարտեն դպրոցը, պիտի գան Վայք: Արդեն մնում է աշակերտի հայեցողությանը:
- Քաղաք, քաղաք, քաղաք, բայց գյուղի կյանքի վրա ուշադրություն չի դարձվում:
- Ես չեմ վստահում տաքսիներին, ես Արցախից սնարյադների տակից երեխուս փախցնեմ, բերեմ ստեղ հանձնեմ «գժական» քշող տաքսիստի՞ն. թող ապահովեն նորմալ տրանսպորտ, որ ես երեխային հանգիստ ուղարկեմ դասի, մանկապարտեզ:
- Հիմնական ճանապարհները լավն են, նախկինում Խնձորուտ մի ժամում էինք գնում, հիմա՝ կես ժամում:
- Հաշվարկված է, որ տրանսպորտը մի քանի անգամ կարող է գնալ-գալ, որ երեխաներին տանի բերի: Տրանսպորտը կարող է նաև ծնողներին տանի-բերի, եթե կարիք կա դպրոց գնալու:
- Ես անչափահաս եմ, բայց եթե ես լինեի խոշորացված համայնքի ղեկավարը, ներքաղաքային փոքր մեքենաներից որոշները կուղղորդեի գյուղ, գոնե աշխատանքային օրերին ու ժամերին կապահովեի կապը Վայքի հետ:
- Ազատեկն իմ Մարտակետի նման գյուղ է, շատ լավ տեղ է, բայց աշխատատեղ չկա, դրա համար ուզում եմ գնամ:
- Գյուղը հիմա մեռած է, այստեղ ոչինչ հետաքրքիր չէ երիտասարդին: Ես որպես երիտասարդ մի առաջարկ ունեմ, եթե բյուջե կա, թող տրամադրվի համայնքից մի մարդու, ով ինչ-որ ոլորտում շատ լավ է, գնա վերապատրաստվի ու վերադառնա գյուղ ու ինքն էլ մյուսներին սովորեցնի:
- Հասկանում եք, մեր ծնողները սովոր են հողագործությանն ու անասնապահությանը, բայց մեր սերունդը ձգում է կրթվել, սովորել համալսարանում, աշխատել գործարանում կամ գրասենյակում, բայց գյուղում ո՛չ նա կա, ո՛չ էլ նա ու հետո ասում են՝ երիտասարդը գնաց ու մնաց Երևանում:
- Առաջ հանրային տրասպորտ կար, համայնքային ավտոբուսներ կային: Հետո սեփական ավտոմեքենաները շատացան, ավտոբուսները վերացան:

- Մարտիրոս, Զեդեա, Արտավան, Բարձրունի, Արին, Սերս, Գոմք բնակավայրերը կարիք ունեն վերանորոգման կամ բարեկարգման:
- Համայնքը թող ապահովի տրանսպորտի հնարավորությունը, ես պատրաստ եմ վճարել, իմ երեխային տանեն ու բերեն ապահով, ես այդ ժամանակը չծախսեմ:
- Արցախում աշխատանքը շատ է եղել, ապրուստը հեշտ է եղել. այստեղ ոչ մի բանը հեշտ չի:
- Փոփոխություններին պետք է նայել համալիր, համակարգային. տրանսպորտի բարելավումը ինքնանպատակ չէ, պիտի նաև սպորտային ինֆրաստրուկտուրաները զարգացնել (մարզադաշտեր և այլն), երիտասարդների համար հետաքրքրությունների բազմազանություն ապահովել, իրար գլուխ հավաքվելու հնարավորություն տալ:
- Երիտասարդները սովորելու ցանկություն ունեն ու հանրային տրասպորտի կարիք ունեն: Նրանք մեքենա չունեն, Վայքում էլ մնալու տեղ չունեն: Նրանց դա պետք է:
- Կան ճանապարներ, որոնք վատն են, բայց տրանսպորտ կա, իսկ կան լավ ճանապարհներ ու չկա տրանսպորտ:
- Տրանսպորտի ապահովման համար չկա շահույթ, քանի որ մասնավոր մեքենաները շատ ռեսուրս պետք է ծախսեն մեքենաների նորոգման վրա ճանապարհների վատ վիճակի պատճառով:
- Ես Սերսի դպրոցում եմ աշխատում, մեր դպրոցի փակվելու համար այնքան դարդ չեմ անում, ինչքան Բարձրունու դպրոցի համար: Ախր սահմանապահ գյուղերում դպրոց-մշակույթի տուն չունենալը ինչի՞ է հանգեցնելու:
- Վայք-Արտավան միկրոավտոբուսը քիչ արդյունավետություն ու շահավետություն ունի:
- Ճանապարհների անանցանելիության խնդիր կա, կիսաքանդ են, տաքսիներն էլ են հաճախ հրաժարվում քշել:
- Մեր հասարակությունն ա վատ, ոչ թե մեր ղեկավարությունը. մենք խնդրել ենք, համայնքը տվել է տրանսպորտ, մենք չենք գնահատում:
- Հասկանու՞մ եք, ես աշխատում եմ Վայքում, բայց ապրում եմ գյուղում: Վերջին տրանսպորտը գյուղ է գնում հենց վեցին: Ես ստիպված եմ վճարել տաքսուն, որ ինձ տուն տանի, էլ չասեմ, որ շաբաթ-կիրակի ընդհանրապես տրանսպորտը չի աշխատում: Պետք է տրանսպորտը գոնե մինչև յոթը-ութը աշխատի:
- Համայնքապետարանը պետք է խոսի մասնավոր բիզնեսների հետ, բացատրի տրանսպորտի ապահովման առավելությունները, աջակցի նրանց, բաց և կառուցողական խոսակցություն վարի բոլորիս հետ:
- Զառիթափը չորս հարյուր տնտեսություն ունեցող համայնք է, բա այստեղ մի մշակույթի տուն, մի նորմալ տրանսպորտ չլինի՞:
- Եվրամիության հրաշալի ծրագիր կար. որոշակի ժամերին անվճար տրանսպորտ էին տրամադրում: Հիմա, ափսոս, չկա այդ ծրագիրը:
- Մեր գյուղ հասնելիս ամեն օր աղոթում ենք, լարված գնում ենք ձորին կից անանցանելի տարածքով, կյանք ենք վստահում վարորդին, անցած տարի ընկել ենք ձորը, մի կերպ ենք փրկվել. ամեն օր այդպես եմ հասնում աշակերտների հետ պարապելու:
- Գյուղն ուզում ենք զարգացնել, բայց գյուղից երեխեքին բերում ենք կենտրոն: Տենց գյուղ չի զարգանա:
- Ես Արցախից եմ, մեզ մոտ էլ միջհամայնքային տրանսպորտի խնդիր կար, բայց զգում եմ, որ Վայքում խնդիրն ավելի սրված է:
- Մեզ տրանսպորտ պետք է, բայց մենք չենք ուզում մեր երեխան գա դպրոց Վայք, բացե՛ք դպրոցները, մանկապարտեզները, մշակույթի տները և ամեն ինչը նաև մյուս բնակավայրերում:

Սցենար 3. Համայնքային մարզական/սպորտային համալիրի ստեղծում

- Մեր դպրոցում ֆիզկուլտուրայի ժամին շախմատ ենք խաղում:

- Մենք ստադիոն չեն կարող մտնել, անհատապես: Ստադիոնը որպես այդպիսին վարձակալության է տրված «Նորավանք» ակումբին:
- Ես Բարձրունու դպրոցում եմ սովորում, շատ լավ կլիներ, որ սպորտային խմբակ լիներ, բոլորս էլ առողջ ապրելակերպ կվարեինք:
- Մենք չգիտենք հիմնվենք մեր հողի վրա՞, թե՞ ոչ, արդյո՞ք տուն կառուցենք, մեքենա գնենք, թե՞ ոչ. եթե դպրոց գյուղում այլևս չի լինելու, ես ինչպե՞ս մնամ գյուղում, երեխաներիս ինչպե՞ս կրթեմ:
- Սպորտով զբաղվել եմ, բայց պայմաններ չկան պորֆեսիոնալ զբաղվելու համար: Օրինակ՝ Վայքի բոքսի կենտրոնը փակեցին տարան Երևան:
- Վայքում ունենք մարզադպրոց և մարզահամալիր:
- Բոլորս հիմա վարում ենք նստակյաց կյանք, ժամանակակից սարքավորումով հագեցած սպորտային համալիրն ու սպորտաձևերի բազմազանությունը կօգնի մոտիվացվելու սպորտով զբաղվելու համար, ամեն ինչից փոքր-փոքր մոտիվացիա պիտի ստեղծենք:
- Վայքում չկա ըմբշամարտ, իմ ընկերը ցանկանում է ըմբիշ դառնալ, բայց ո՛չ բոքսի, ո՛չ ըմբշամարտի խմբակներ չունենք:
- Ես Վայքում եմ սովորում, այստեղ կա սպորտային կենտրոն, բայց մասնագետի խնդիր կա: Շատերը չգիտեն, թե սարքերից ոնց օգտվեն: Իսկ աղջիկները ընդհանրապես չեն գնում, որովհետև կարծրատիպեր կան: Եթե քաջալերեն աղջիկներին կամ, օրինակ, կին մարզիչներ լինեն, մենք սիրով կգնանք, կմարզվենք, կուժեղանանք:
- Գյուղում լինեն վոլեյբոլ, բասկետբոլ կամ նման խմբակներ ես հաճույքով կգնամ, նաև աղջիկները հաստատ կհաճախեն:
- Սպորտային համալիրի կառուցումը անհրաժեշտություն է, ապրում ենք պատերազմող երկրում, սա անհրաժեշտություն է տղա երեխաների համար:
- Վայքի սպորտային ոլորտը կարող ենք գնահատել 10-ից 5:
- Շատ ուրախ կլինենք, որ սպորտային համալիր ստեղծվի, ցանկացած ոճի սպորտաձև ողջունելի է:
- Ինչքան էլ որ կամքով ուժեղ լինես, եթե շրջապատումդ բոլորն ասում են, թե ինչիդ է պետք սպորտը կամ մարզասրահ գնալը, չես գնում:
- Մշակույթի տունը, սպորտդպրոցը կարող է լուծվել մեծ դպրոցի բացմամբ, ամեն ինչ կարող են դպրոցում տեղավորել:
- Ես մանկուց երազել եմ բոքսով զբաղվել, բայց բացի վոլեյբոլից ու բասկետբոլից աղջիկների համար ոչ մի ուրիշ սպորտային խմբակ չկա: Չունենք մարզիչ աղջիկների համար:
- Մեր ծնողները հաստատ չեն ասի՝ արի դաշտում աշխատի, բայց խմբակի մի գնա, սակայն մենք կգնանք տնեցիներին օգնելու:
- Մենք շատ լավ վերանորոգված մարզադպրոց ունենք, սինթետիկ հատակով մարզադաշտ ունենք... Վայքի ավագ դպրոցներից մեկն էլ շատ լավ մարզադահլիճ ունի:
- Ես խմբակի էի մասնակցում, բայց մի պահ եկավ, որ խմբակը փոքրացել էր, փակվեց:
- Դպրոցի դահլիճը չի ջեռուցվում, լինելով տարածաշրջանի լավագույն սպորտային դահլիճը, ձմռանը ֆիզկուլտուրան գրեթե չի լինում: Կարող է ջեռուցվել արևային պանելներով ու ողջ տարի առողջ ապրելակերպն ապահովվի:
- Այս 5 ծրագրերն էլ բոլոր գյուղերում անհրաժեշտ են, որովհետև գյուղի երեխեն կյանքից կտրված է, ավելին ասեմ՝ այս 5 ծրագրերը քիչ են:
- Առաջարկում եմ՝ ավելի լավ է մարզիչը, այսինքն մի մարդ, գյուղ գնա ու պարապի, քան թե երեսուն երեխայի գյուղից հասցնել քաղաք մարզվելու համար:
- Վոլեյբոլը Վայքում հայտնի մարզաձև է, միշտ լավ մարզիչներ ենք ունեցել:
- Սպորտի զարգացումը պետք է սկսել գյուղական համայնքներից, այնտեղ երիտասարդներն ավելի ակտիվ կլինեն:

- Ունենք շատ սիրուն, նոր ֆուտբոլի դաշտ, չունենք գնդակներ, չունենք գույք, չենք կարողանում երեխաներին իջեցնել ֆուտբոլի, ցանկանում ենք կազմերպել մարզային խաղել, ունենալ ուսուցիչ:
- Զբաղվածության պատճառով ես չեմ հասցնում խմբակ գնալ:
- Մեկ-մեկ, չգիտես ինչու, գնում են Եղեգնաձորի սպորտային խմբակներ, բայց մեզ մոտ էլ կան լավ խմբակներ...
- Մենք գյուղական համայնքներում խնդիրներ ունենք՝ մարզիչին վճարել է պետք, կացարան է պետք, իսկ այդ գումարը համայնքը չունի:
- Նաև ինձ համար ես մեծ հաճույքով կայցելեի ֆիթնեսի, բայց բացարձակ ոչ մի տարբերակ չկա կանանց համար:
- Սպորտի մարզասրահ որ լինի, ես էլ, չնայած տարիքիս, մեծ հաճույքով կգնամ մարզասրահ:
- Եթե ունենանք մեծ մրցակցային միջոցառումներ հենց սպորտային ոլորտում, բոլոր գյուղերը կներգրավվեն, կծանոթանան, կշփվեն, մեկ գյուղում կանենք ֆուտբոլի մրցույթը, մյուսում թենիսը:
- Արևելյան մարզաձևի մարզիչ ունեինք, բայց քիչ երեխա էր մասնակցում... Գովազդի խնդիր կա:
- Իմ տղան ֆուտբոլիստ է, մենք նախաձեռնելու ենք, որ գյուղերի միջև մրցումներ լինեն:
- Մենք այստեղ մտածում ենք, թե ինչպես գյուղերի համար մի լավ բան անել, բայց Դուք չգիտեք, որ գյուղերում մարդիկ կան, որոնք մտածում են՝ ոնց քանդեն այդ ստեղծածը, պետք է լինի մի մարդ ով «աչքի լույսի» պես պահի ստեղծածը, լինի դա մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն, թե սպորտդպրոց:
- Մենք ակնկալիք ունենք Ամուլսարի ծրագրերի իրականացման հետ կապված, որոնց արդյունքում Վայք, Սիսիան և Ջերմուկ համայնքներում ստացված գումարով կարելի է մշակութային օջախների վերականգնման, սպորտային համալիրների ձևավորման աշխատանքներ ձեռնարկել:
- Լողով զբաղվելու հնարավորություն չունենք, անգամ 1 լողավազանը կարող է լուծել շատ խնդիրներ:
- Մեր գյուղի երեխեքից (Հերհեր) շատ սպորտսմեններ դուրս եկան, քանի որ դպրոցի տնօրենը չէր թողնում խմբակ բաց թողնել:
- Ես դպրոցի տնօրենն եմ, եթե մարզպետարանից ունենամ ցուցում, որ կարող եմ սպորտային միջոցառումներին ներգրավվել աշակերտներիս, նաև կստանձնեմ պատասխանատվություն ճանապարհի և տրանսպորտի կազմակերպման համար:
- Վայք խոշորացված համայնքի երիտասարդների շրջանում մեծ հետաքրքրվածություն կա սպորտի նկատմամբ՝ երիտասարդները չեն թափառի, հեռախոսներից կկտրվեն:
- Մենք՝ երիտասարդներով բասկետբոլ ենք շատ սիրում: Կարատեի էլ ենք գնում: Եթե գիմնաստիկայի խմբակ լիներ, աղջիկները հաճույքով կգնային:
- Մարզիչներ են մեզ պետք, ճիշտ մարզիչներ, որ հասկանան ինչ է ինձ պետք ու ինչ արդյունք կարող եմ ունենալ:
- Սպորտդպրոցում խմբակները քիչ են, ավելի լավ կլինի, որ սպորտի խմբակները ավելանան, քանի որ կարծում եմ սպորտը երիտասարդների ու փոքրերի համար ավելի հետաքրքիր է, քան մշակույթը:
- Մեծերը կարծում են, որ մշակույթն է կարևոր, իսկ երիտասարդների համար սպորտն է կարևոր, սպորտը համ էլ առողջարար է:
- Սպորտային խմբակների հաճախումների պակաս վստահաբար չի լինի: Ազատեկի դպրոցում կարատեի խմբակ է բացվել, բոլորը մեծ հաճույքով հաճախում են:
- Բոլոր դպրոցներում, որ ամենալավն է աշխատում, ֆիզիկական կուլտուրայի դասերն են: Բայց բացակայում են պրոֆեսիոնալ մարզիչները, ովքեր տարիների ընթացքում գնացել են Երևան:
- Սպորտդպրոցը կարող է ծառայել նաև բանավեճեր կազմակերպելու համար, ցանկություն է պետք միայն:
- Սպորտային համալիրը պետք է ներառի ֆուտբոլ, վոլեյբոլ, թենիս, բռնցքամարտ, շատ կուզենք՝ լող:
- Եթե լավ մասնագետ լինի, բոլոր տեղերից կգան Վայք՝ սպորտի: Ես երբ Եղեգնաձորից գալիս եմ տրանսպորտով, տեսնում եմ, որ նույնիսկ Եղեգնաձորից գալիս են:

- Ավելի կարևոր է լողավազանի կառուցումը, քանի որ կլինի նորություն:
- Սպորտդպրոցը ձմռանը հիմնականում չի ջեռուցվում:
- Եթե մենք էլ պայմաններ ունենայինք, հաստատ Վայքն էլ Գյումրու նման կտար փառահեղ մարզիկներ, աշխարհի և օլիմպիական չեմպիոններ, հանրահայտ դերասաններ, երգիչներ ու մշակույթի գործիչներ:
- Ունեցել ենք բռնցքամարտի մարզիչ, հաճախում էինք խմբակ, հիմա մարզիչ չունենք, էլ չենք գնում, ափսոս:
- Մեր մոտ չկա այն մենթալիտետը, որ սպորտային համալիրը կսահմանափակվի կանանց այցելության համար:
- Աղջիկների համար ավելի քիչ հնարավորություններ կան, ավելի ճիշտ չկան: Լավ կլիներ, եթե լիներ լող, գիմնաստիկա, ֆիթնես...
- Այսօր պետք է լինի ինչ- որ վայր, որը ջեռուցվում է և վերանորոգված է. այդ մի տարածքում կարող են կենտրոնացնել բոլորը միասին:
- Դպրոցի ծրագրով նախատեսվում է սպորտ դասերն անցկացնել ձնածածկ տարածքներում, բայց չի արվում:
- Կարատեի խմբակը վճարովի է, իսկ ֆուտբոլը, վոլեյբոլը անվճար են, մեր համայնքն է վճարում ծախսերը: Հիմա Մշակույթի տանն ունենք նաև սեղանի թենիսի, բիլիարդի խմբակ:
- Վայքում կա աղջիկների ֆուտբոլի թիմ, անունը՝ «Արցախ»:
- Ո՛չ կանայք, ո՛չ տղամարդիկ չունեն համապատասխան վայրեր սպորտով զբաղվելու:
- Մեր երեխաները տաղանդավոր են, եթե խմբակների հնարավորություն լինի, միգուցե մեկը հետո մեր համայնքը աշխարհահռչակ դարձնի:
- Եթե լողավազան ունենանք, նաև մի շարք բժշկական հարցեր կկարողանանք լուծել, հատկապես հաշմանդամների շրջանում:

Սցենար 4. Տարեցների ժամանցի/խնամքի կենտրոնների ստեղծում

- Գիտեմ, որ այլ մարզերում կան տարեցների խնդիրներով զբաղվող կենտրոններ. այնտեղ մարդիկ հավաքվում, նարդի-շաշկի են խաղում: Կարելի է ստեղծել կենտրոններ, որտեղ և՛ հոգեբանական աջակցություն կցուցաբերեն, և՛ տարեցների զբաղվածությունը կապահովեն: Բայց Վայքում չկա այդպիսի բան:
- Լավ կլինի, որ տատիկ-պապիկները հավաքվեն, քարտ, նարդի խաղան:
- Եկեք մի կողմ դնենք տարեցների խնամքի կենտրոնների հարցը: Ոչ մի վայքեցի իր ծնողին թույլ չի տա գնալ որևէ ընդհանուր ճաշարանից օգտվի: Սա առաջին հերթին արժանապատվության հարց է, և հետո նոր՝ կարիքի:
- Այս թեմայի հետ կապված գալիս ենք նրան, որ պետք է Մշակույթի տուն, որից օգտվում են նաև տարեցները:
- Գյուղամեջում տղամարդիկ նստում են, քարտ են խաղում, սա է իրենց ժամանցի կենտրոնը:
- Միայնակ տարեցների համար եթե ժամանցի և խնամքի կենտրոններ լինեն, շատ լավ կլինի:
- Վայքում ծերանոցի կարիք չունենք հաստատ:
- Եթե խնամքի կենտրոն լիներ, ես իմ տատիկին անձամբ կբերեի այդ կենտրոն: Քանի որ եթե էն ժամանակ իջնում էր բակ, հիմա ամբողջ օրը տանն է:
- Մեզ մոտ թասիբը մի քիչ ուրիշ է, մենք չենք կարող թողնել, որ մեր տատիկ-պապիկներին տանեն խնամքի կենտրոն, բայց ժամանցի հարցը ուրիշ է, կարելի է ծրագրեր մշակել:
- Կարող է լուծումը լինի նաև այնպես, որ բակերում կամ համայնքի կենտրոններում «բեսեդկաներ» ստեղծվեն:
- Շատ կարևոր է «ծերապարտեզ» կոչվածը, իրենց ժամանցի կենտրոնը պետք է ստեղծվի:

- Քաղաքում պատվավոր տարեց արհեստավորներ ունենք. խառատ, մետաղագործ: Բայց իրենց արհեստը հիմա անտեսված է, ջահելները չեն ուզում նրանցից որևէ բան սովորել: Իրենք Տիկ-տոկով են տարված: Բայց այդ մարդիկ շատ բան կարող են ջահելներին սովորեցնել:
- Տարեցների ժամանցի կետրոն եթե լինի, շատ լավ կլինի՝ մի քանի բեսեդկա, ձմեռն էլ տաք տեղ լինի, հերիքա:
- Մեր տարեցները լավ էլ հավաքվում են, լավ էլ ժամանակ են իրար հետ անցկացնում, ոչ մի ժամանցի կենտրոն էլ պետք չէ:
- Բակում տարեցները հավաքվում են, խաղեր են խաղում: Եթե համապատասխան պայմաններ լինեն, կհավաքվեն, կծանոթանան ու ավելի լավ կկազմակերպվի իրենց ժամանցը:
- Շաբաթվա մեջ մեկ օր ես կգնայի հաստատ տարեցների խնամքի կենտրոնում կամավորություն անելու:
- Նախկինում մեր մեծերը համայնքում որ հավաքվում էին, սոցիալական, համայնքային հարցեր էին լուծում:
- Էն ժամանակ հավաքվում էին գյուղամեջ, շփվում էին, զբաղվում էին, իսկ հիմա կարելի է մի քանի փոքր գյուղի համար մի կենտրոն ունենալ ու մեծահասակների ժամանցը կազմակերպել՝ շախմատ, շաշկի, նարդի, բլոտ, ինչու՞ ոչ:
- Մեր՝ Վայոց ձորի տարածքներում տարեցիները շատ պասիվ են, արդեն մտածելակերպի խնդիր կլինի, կարծում եմ, չի աշխատի:
- Մենք՝ երիտասարդներս, ճիշտ է, սիրում ենք մեր տարեկիցների հետ շփվել: Բայց եթե տարեցների կենտրոններ լինեն, շատ հնարավոր է, որ այնտեղ ջահելները կամավորություն անեն: Կամավորությունը հիմա «թրենդային» է դարձել, գուցե ուզենան...
- Տարեցների ժամանցի կենտրոն կարելի է նաև մշակույթի տանը կազմակերպել:
- Առաջ մենք դպրոցներից հետո գնում էինք գյուղի տարեցներին օգնելու: Բայց հիմա էդպես չի, ցավոք սրտի:
- Թող լինի ձմեռային խմբակներ տարեցների համար, թե չէ հիմա նստում են մեկ սեղանիկի մոտ ու մրսելով ժամանակ անցկացնում միասին:
- Այսպես տարեցները ևս կարող են մասնակցել համայնքային կյանքին:
- Թող մեր տարեցները միայն չաշխատեն ամբողջ կյանքում, նաև վայելեն, իմանանք, որ շատ ժամանակ են անցկացնում միայն իրենց համար:
- Այս կենտրոնում կարող են մեծահասակներն ու երիտասարդները միասին ժամանակ անցկացնել՝ շախմատ խաղալ, ու երիտասարդն էլ մեծահասակից մի նոր ու ավել բան կսովորի:
- Նախարարությունը ուներ հայտարարած դրամաշնորհ և ոչ մի ՀԿ Վայոց ձորից չէր դիմել, որ իրականացներ այդ գործառույթը:
- Ես նկատել եմ, որ մեր տատիկ-պապիկներն իրենց շենքերի «բեսեդկաներում» շախմատ, նարդի են խաղում: Սա ինձ համար կոլորիտային է, համուհոտ է տալիս մեր համայնքին: Կարելի է, օրինակ, ինչ-որ առաջնություններ ու մրցույթներ կազմակերպել իրենց մասնակցությամբ՝ իհարկե խրախուսանքով:
- Կան տարածաշրջանին հատուկ ճաշեր, խաղեր, որոնք կարևոր է սերնդեսերունդ փոխանցել:
- Այդ կենտրոնները չեն գործի. փոքր բնակավայր է, տարեցների զավակները կասեն, ամոթ է, չենք ուզում, որ քեզ ուրիշները օգնեն, չենք ուզում, որ տեսնեն, որ ձեզ ինչ-որ ձևով այլ ջահելներ օգնում են:
- Պիտի լինեն տարեցների համար նախատեսված կենտրոններ, որտեղ պիտի լինենք նաև մենք՝ երիտասարդներս, օգնենք լավ ժամանց անցկացնելու՝ իրենց հետ շփվելով, զրուցելով, սեղանի խաղեր խաղալով:
- Հասկանու՞մ եք՝ ինձ համար ավելի լավ է ես գնամ այդ կենտրոն շաշկի ու նարդի խաղամ, քան նստեմ տանը ու հեռախոսը թերթեմ, ինտերնետը բոլորիս՝ և՛ մեզ մեծերիս, և՛ երիտասարդներին, բթացնում է:

- Այս պահին առաջնահերթ չի, բայց գալու է ժամանակ, որ դառնալու է առաջնահերթ, ուղղակի համայնքներում ավելի շատ պրոբլեմներ կան, որոնք վերաբերվում է երիտասարդներին, դրանց լուծվելուց հետո նոր կմտածենք տարեցների մասին:
- Այս խնդիրը լուծել է պետք ոչ միայն Վայոց ձորում, այլ ամբողջ Հայաստանի տարածքում:
- Տարեցների համար ժամանցի կենտրոնում մենք ընկերներով կգնենք շախմատ կխաղանք դպրոցից հետո:
- Ջահելները չեն ուզում մնալ Վայքում, այստեղ կյանք չկա, չեն ուզում այստեղ աշխատել կամ կամավորություն անել:
- Իմ պապիկը իր ամբողջ կյանքի ընթացքում մի քանի մասնագիտություն է փոխել: Իսկ հիմա, չնայած իր տարիքին, սեփական ռեստորան է հիմնել ու շատ է սիրում իր աշխատանքը:
- Տարեցներին տանենք մշակույթի կենտրոններ, թող երիտասարդներն ու տարեցներն իրար հետ շփվեն, միասին սպորտով զբաղվեն, կիսվեն փորձով:
- Երիտասարդները կտեսնեն ավանդույթների փոխանցումը ժամանցի/խնամքի նման կենտրոնում:
- Այդ կենտրոնը պետք է լինի մոբիլ՝ Վայքից այլ փոքր գյուղեր գնալու ու տարեցներին օգնելու նպատակով, երիտասարդներ ուղարկի բնակավայրեր:
- Ես մեղվապահ եմ, կարող եմ մեծերի համար կազմակերպել մեղվապահության դասընթացներ, հա՛մ իրենց առողջ սնվելու համար, հա՛մ գյուղում հավելյալ զբաղմունքի համար:
- Պապիկները հիմա էլ են հավաքվում, եթե տաք տեղ լինի, այնտեղ կհավաքվեն:
- Մենք՝ վայքեցի երիտասարդներս, պետք է գնանք որպես կամավոր գյուղերում բնակվող տարեցներին խնամենք, որը նաև կօգնի մեծահասակներին լսելու և նրանցից սովորելու. մենք շատ բան ունենք իրենցից սովորելու:
- Ազատեկում տարեցներն ունեն իրենց զբաղմունքի տեղերը: Իրենց համար լավ կլինի, որ բժշկական հարցերը լուծվեն, կարողանան առաջնային բուժօգնություն ստանալ: Գոնե մի օր նշանակվի, բժիշկներ գան, իրենք էլ գնան զննվելու:
- Երիտասարդությունը հզոր ուժ է, եթե աշխատեն էնքա՜ն հարց հնարավոր կլինի լուծել:
- Այստեղ անարդարության խնդիր կառաջանա, եթե մեկի երեխան ավարտի ու գնա Երևան, կոպիտ ասած՝ ոտքը ոտքին քցած ապրի, իսկ մյուսները գյուղերում տարեցներ պահեն:
- Վայքում ծերանոցը կամ խնամքի կենտրոնը չի գործի: Նույնիսկ միայնակ ծերերը չեն գնա ծերանոց, ամոթի պատճառով:
- Տատիկ-պապիկները ինքնաբուխ կարող են իրենց օրը լավ կազմակերպել, իրենց ոչ մի ուղղորդում էլ պետք չի:
- Երիտասարդ սերունդը պարտավոր է տեր կանգնել ծերերին, ոչ թե ստեղծվեն նման կենտրոն:
- Տատիկներին կարող ենք հավաքել կարևոր գաղափարի, օրինակ՝ զինվորների համար գուլպաներ գործելու շուրջ:
- Երեխաների և թոռների հետ ապրող տարեցները «քիթ սրբելու ժամանակ չունեն», ի՞նչ ազատ ժամանակ ու դա լցնելու մասին է խոսքը:
- Ծերանոցը կարող է միջոց լինել, որ օգնենք մեկս մյուսին, կամավորության միջոցով, կփորձենք իրենց նաև ընկերակցել, օգնել:
- Տարիներ առաջ մենք թատերական խմբակ ունեինք, որին մասնակցում էին և՛ մեծերը, և՛ երիտասարդները: Հիմա մշակույթի տանը ևս կարող ենք նման խմբակներ ունենալ:
- Եթե թոշակները մի փոքր բարձր լինեն, մարդիկ կարող են ինքնուրույն նորմալ ապրել, նման կենտրոնի կարիքը չէր լինի:
- Տեսեք, եթե կառուցեն մի շենք, կարող ենք դա միավորել ու օգտագործել թե՛ երիտասարդների, թե՛ տարեցների համար. այստեղ էլ տրանսպորտի խնդիրը հետ կընկնի, եթե ամեն ինչ մեկ տեղում լինի, էլ կարիք չի լինի տեղափոխվելու:

Սցենար 5. Երիտասարդների զբաղվածության կենտրոնի հիմնում

- Մեր երիտասարդների խնդրանքով ուզում ենք մշակույթի տանը մի սենյակ հատկացնել՝ ի նպաստ մեր համայնքի, որտեղ ակտիվ երիտասարդները կհավաքվեն, գաղափարներ կքննարկեն:
- Երևան գնալու հնարավորություն բոլորս էլ ունենք, ես մնացել եմ Վայքում:
- Այսօրվա ծրագրերի 90 տոկոսը կարող է իրականացնել գյուղում մի հատ կոմպլեքս ստեղծելով և վերջ:
- Մեր գյուղում հիմա կա կավիճի արտադրամաս և չրի արտադրամաս, կարծում եմ՝ կարող են գտնել աշխատանք, սակայն իմ տարիքը դեռ չի լրացել, որ աշխատեմ:
- Երիտասարդ չի մնացել, որ իրենց համար զբաղվածության կենտրոն ստեղծենք: Գնացել են բոլորը...
- Ուզում եմ իրավաբան դառնամ, այստեղ չեմ կարող աշխատել, պետք է գնամ քաղաք, քանի որ իմ մասնագիտությամբ չեմ կարողանալու այստեղ աշխատել:
- Մեր գյուղում հիմնականում սեզոնային աշխատանք է: Ձմեռները մենք աշխատանք չունենք:
- Որ գործ լինի, բոլորն էլ հետ կգան: Սպորտ, արվեստ, էդ ամեն ինչը լավ է, բայց գործ պիտի լինի առաջին հերթին:
- Ապագա թարգմանչուհի եմ՝ անգլերեն-հայերեն, իսպաներեն-գերմաներեն, մնամ համայնքում ի՞նչ աշխատեմ:
- Այսօր երիտասարդը հող չի մշակում, նա ձգտում է գնալ Երևան ու չոր գումար աշխատել՝ բանվոր աշխատելով, թե չէ տանջվի, հող մշակի, որ հետո կարկուտ գա կամ այլ մի բան, ու ամեն ինչ փչանա՞:
- Ո՞նց կարող են աղջիկները գան բերք հավաքեն կամ խոտ հնձեն:
- Իմ ցանկությունն էն ա, որ նենց հնարավորություններ լինեն, որ ես համայնքից չգնամ:
- Ոչ միայն Վայք քաղաքի, այլ շրջակա գյուղերի ակտիվ երիտասարդներն են մասնակցում Վայք համայնքին վերաբերող խնդիրների լուծմանը: Սա հատկապես կարևոր է երիտասարդների միջև կապեր հաստատելու առումով:
- Երիտասարդներն ուշադրության կարիք ունենք: Չենք ուզում իզոլացված լինել: Կուզեինք, որ միջոցառումներ կազմակերպեինք, ու ամեն տեղից հանդիսատես գար:
- Կասե՞ք ինչպես եղավ, որ սովետի ժամանակ կային պայմանները, և բոլոր երիտասարդները զբաղվում էին սպորտով ու մշակույթով, իսկ հիմա հետաքրքիր չի լինի. ավելի լավ է լցնել երիտասարդների օրը ամեն ինչով, քան թե թողնել, որ ամբողջ օրը ինտերնետից դուրս չգան ու շահումով ինչ-որ կայքերում դժվար վաստակած գումար վատնեն:
- Այսօր գյուղում այս ամեն ինչն էլ պետք է ու շատ շտապ. մենք սահմանապահ ենք, մենք զինվոր ենք, եթե մենք գնանք, ի՞նչ է լինելու:
- Հերհերում և Ազատեկում ակտիվ երիտասարդներ կան, եթե այդ երկու գյուղում լինեն կենտրոններ, վստահ եղեք, որ երիտասարդներն ակտիվորեն կմասնակցեն ամեն ինչին:
- Ես դեռ չեմ որոշել ինչ մասնագիտություն եմ ընտրելու, մաթեմատիկա եմ շատ սիրում, բայց չեմ պատկերացնում զբաղվածությունս ապագայում: Ուզում եմ նենց բան, որ հայրենիքիս ու համայնքիս օգուտ տամ:
- Շատ երիտասարդներ ուզում են որոշակի մասնագիտություն ստանալ, բայց էստեղ դա չեն սովորեցնում:
- Պետք է ունենալ մշակույթի տուն, որ ներառի ամեն ինչ:
- Երիտասարդների հիմնական մասը ձգտում է գնալ Երևան կամ արտասահման՝ չտեսնելով ապագա իրենց համայնքում: Երիտասարդներին պետք է մնալու մոտիվացիա, օրինակ՝ ես՝ որպես ապագա ճարտարապետ, պիտի ունենամ մասնագիտությամբ աշխատելու հնարավորություն՝ իմ համայնքին օգտակար լինելու համար:

- Ես հիմա մասնագիտություն եմ փորձում ընտրել, լավ կլինի, որ երիտասարդական կենտրոն լինի, մասնագիտական կողմնորոշման ծրագրեր:
- Ինձ համար, որպես ապագա դիմորդ, կարևոր է մեր համայնքում ինչ-որ կենտրոնի ստեղծումը, որտեղ կարող ենք նորություններ ստանալ, օրինակ՝ կրթաթոշակների, տարբեր ծրագրերի վերաբերյալ:
- Ես այլ մասնագիտություն էի ընտրել, բայց քանի որ ուսումս Երևանում շատ թանկ կլիներ, գնացի ինձ մոտիկ համալսարան, ու տարիներն այնտեղ լրիվ ապարդյուն էին:
- Ես տասնյոթ տարեկան եմ, մեղվաբույծ եմ, այս կենտրոնը ինձ կօգնի գտնել աշխատանք հենց իմ մասնագիտությամբ ու ես սիրով կաշխատեմ:
- Երիտասարդները և՛ ժամանցի վայրերի կարիք ունեն, և՛ կրթական տեղական հաստատությունների:
- Վայքի ճանապարհները վերանորոգելու համար Մարտունուց բրիգադ էր եկել, որ մեր ճանապարհները սարքեն: Վայքի աշխատանքային խմբերը գնում են ուրիշ համայնքներ, իսկ այլ համայնքներից բերում են այստեղ Վայք:
- Ես դառնալու եմ իրավաբան, քանի որ արկածներ շատ եմ սիրում: Իմ ապագան որոշել եմ ուսուցիչների հետ խոսակցության շնորհիվ, ըստ դրա ընտրում եմ ինչ լեզուներ սովորեմ, ինչ խմբակներ փնտրեմ:
- Մասնագիտական կրթություն ստանալուց հետո պիտի ունենանք համայնք վերադառնալու մոտիվացիա, համայնքի տարբեր խնդիրներ լուծելու համար համախմբվելու վայր:
- Ես Արտավանից եմ: Ուզում եմ ինչ-որ նախաձեռնություն իրականացնել, բայց ոչ ոք չի ուզում մասնակցել, ոչ մեկի կողմից աջակցություն չկա, հատկապես՝ մեծերի կողմից: Գյուղերում մեծերը նույնիսկ բարկանում են ակտիվ, նախաձեռնող երիտասարդների վրա, ասում են «էստեղից գնա...»: Նախաձեռնությունները չեն խրախուսվում, լճացած վիճակ է:
- Մինչև համալսարանն ավարտելը Երևանում հնարավորություն կա որևէ աշխատանք անելու, բայց, օրինակ, մեզ մոտ այդ հնարավորությունը չկա:
- Մեր հարևանը ունի խելացի անասնագոմ, հազար անգամ հայտարարություն տրվեց, բայց, ոչ ոք չեկավ... եկան էլի մարտունեցիները:
- Իմ կարծիքով սա կաշխատի Վայքում: Մենք ունենք շատ ուսանողներ՝ սովորում գալիս են ու աշխատանք չունեն: Տղաները մնում են քաղաքում ու ամեն տեսակ աշխատանքով են զբաղվում, բայց ոչ մասնագիտությամբ:
- Մեր երեխաները ուզում են դառնալ բժիշկ, իրավաբան, բայց գյուղում իրենք նման մասնագիտությամբ աշխատանք չունեն:
- Կլինի մշակույթի տուն, երիտասարդական կենտրոն կամ որևէ այլ կենտրոն, բայց դա շփվելու, իրար լսելու հնարավորություն և ժամանցի համար լավագույն միջոցն է:
- Մենք չենք ուզում մասնավոր խանութներում աշխատել, քանի որ այնտեղ շատ են մեզ աշխատացնում՝ ամեն ինչ պիտի մի հոգի անի:
- Ես կնախընտրեմ զինվորական գործով շարունակել իմ ապագան: Հատկապես մեր գյուղում՝ Բարձրունում. սա շատ կարևոր է:
- Մեր երեխաները չունեն մոտիվացիա հետագայում գյուղ վերադառնալու և գյուղում իրենց մասնագիտությամբ աշխատելու համար:
- Մասնագիտական կողմնորոշումը կօգնի ճիշտ ուղղորդում տալ, թե ինչպիսի մասնագետ է անհրաժեշտ մեր երկրին:

Այլ առաջարկներ

- Հիվանդանոցի հարց ունենք: Դա երիտասարդներին էլ է առնչվում:
- Փողոցային շների խնդիրը Վայքում լուրջ խնդիր է:

- Առաջինը պետք է երիտասարդների աշխատատեղերի հարցը լուծել: Հենց այդ հարցը լուծվեց, նրանք համայնքը չեն լքի: Ով որտեղ ծնվել է, էնտեղ կմնա, կշենացնի:
- Զեդեայում ճանապարհի առաջնային խնդիր կա, եթե դա լուծվի, շատ բան կփոխվի:
- Եթե ֆինանսականը չի հերիքելու այս 5 կետերից որևէ մեկը կատարելու, գոնե այդ մեծ ծրագրի մի փոքր մասը իրականացնենք:
- Կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման ոլորտում:
- Կառավարությունը այսօր փակում է գյուղի դպրոցները, կտրում է գյուղի երեխայի ոտքերը, դուք ասում եք նոր մշակույթի կենտրոն բացենք, իսկ ռեալ կյանքում այսպես չէ: Սահմանամերձ գյուղից եթե ես իմ չորս երեխաներին բերեմ Վայք դպրոց, ապա կտեղափոխվեմ ինքս Վայք ապրելու ու սահմանամերձ գյուղը կդատարկվի:
- Արցախցիները, գումարած այդ ամենին, քաղաքացիության խնդիր էլ ունեն, աշխատանք չեն գտնում:
- Մեր գյուղում ընտանիք կա, ծնողները տարիներով երեխաներին դժվարությամբ պահեցին Երևանում սովորելու նպատակով: Երեխաները վերադարձել են և խանութում վաճառող են, քանի որ ցանկություններն ու հնարավորությունները իրար հակասում են:
- Ռազմական կրթության հնարավորությունը համայնքում անհրաժեշտություն է:
- Գյուղը զարգացնելու համար գյուղը եկեղեցի, խաչքարեր և շատ հետարքրիր վայրեր ունի, տեղեկատվական կենտրոն ստեղծել, որ տուրիստների բերի ծանոթացնի:
- Մեր գյուղում կա ջրի խնդիրը, միջոցառումները իրականացնելու համար սրահ չկա:
- Հերհերին պետք են կարկտակայաններ:
- Արցախից դուրս եմ եկել, էստեղ հարմարվել եմ արդեն, շատ կուզենամ Արցախի մշակույթը կարողանանք մեր համայնքում նույնպես ներկայացնել:
- Վայքի երիտասարդների մեծ խմբեր կարելի է միավորել հենց համայնքի զարգացման գաղափարի շուրջ:
- Երեխաների խաղահրապարակներ:
- Վայքում ոչ-ֆորմալ կրթության փոքրիկ կենտրոններ են պետք գյուղերից եկող ուսանողների համար: Նրանք կարող են այդ կենտրոններում ժամանակ անցկացնել, մինչև որ իրենց գյուղ տեղափոխող մեքենան տեղ հասնի:
- Մասնագիտական որակավորումների բարելավման դասընթացների կարիք կա շատ:
- Երիտասարդների զբաղվածությունը պետք է այնպիսի ուղղություններով լինի, որ գոնե ապահովի որոշակի գումար: Օրինակ՝ մեզ մոտ կարող է առաջնային լինել խոտաբույսերի մշակման բիզնեսը:
- Հերհերը սահմանամերձի կարգավիճակ ստանա, որպեսզի հարկերը շատ չվճարենք:
- Մի՛ օպտիմալացրեք այն, ինչ պետք չէ օպտիմալացնել՝ դպրոցներն ու հիվանդանոցները: Սա է ինձ հետաքրքրում:
- Մեր համայնքում կան երեխաներ ու երիտասարդներ, որ չգիտեն ինչ է կինոն ու թատրոնը, պատկերացում չունեն դա ինչպես է լինում:

6. Քվեարկությունների արդյունքները



Հավելված 1. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Ցուցումներ Վայքի համահամայնքային քննարկման սեղանավարների (facilitator) համար

Ձեր խնդիրն է ուղղորդել քննարկումը, կարգավորել այն, դարձնել միաժամանակ և՛ լուրջ, և՛ ուրախ, արդյունավետ ու չհոգնեցնող:

Ձեր սեղանի շուրջ կլինեն 10-15 մասնակիցներ, մոտ կեսը կլինեն երիտասարդներ, մյուս կեսը՝ ավելի բարձր տարիքի քաղաքացիներ, նրանք տարբեր մասնագիտության, տարբեր նախասիրությունների տեր տղաներ ու աղջիկներ, կանայք ու տղամարդիկ են, ում քննարկման ժամանակ միավորում է մեկ բան. նրանք բոլորը Վայք խոշորացված համայնքի բնակիչներ են և հավաքվել են մտածելու Վայքի երիտասարդների խնդիրների շուրջ: Քննարկման կդրվի 5 սցենար, 5 տարբեր իրականանալի ծրագրային գաղափարներ: Մի քանի կարևոր կետ.

- Հստակորեն ներկայացրեք քննարկման կանոնները, կարևորեք՝ միշտ խոսում է միայն մեկը սկզբունքը:
- Առաջին անգամ խոսելիս խնդրեք, որպեսզի մասնակիցը ներկայանա՝ առնվազն մեկ անգամ ևս նշելով համայքը կամ աշխատանքային ոլորտը:
- Յուրաքանչյուր սցենարի վերաբերյալ քննարկումներն սկսելուց առաջ կարող եք հակիրճ՝ 5-6 սեղմ նախադասությամբ ամփոփել սցենարի հիմնական դրույթները:
- Այս ներկայացման ժամանակ փորձեք խուսափել այնպիսի բառեր օգտագործելուց, որոնք հատուկ են ակադեմիական կամ մասնագիտական լսարանին, խոսեք պարզ ու մատչելի լեզվով:
- Աշխատեք ձեր ներկայությունը դարձնել աննկատ, միաժամանակ քննարկման տեմպը պահեք Ձեր ձեռքում: Ինքներդ քննարկմանը մի մասնակցեք, այլ հարցերով փորձեք ներգրավել սեղանի շուրջ գտնվող բոլոր մասնակիցներին:
- Արտահայտվելու հնարավորություն տվեք բոլորին, սակայն մի պարտադրեք խոսել նրանց, ովքեր գտնում են, որ ասելիք չունեն: Կարող եք նորից անդրադառնալ տվյալ մասնակցին, բայց փոքր-ինչ ավելի ուշ:
- Կարող եք ուղղակիորեն դիմել մասնակիցներից որևէ մեկին, այնուհետև ձախից աջ, կամ մեկ այլ սկզբունքով, օրինակ՝ ըստ համայնքների, խրախուսել մասնակիցներին, որպեսզի արտահայտվեն: Միաժամանակ, փորձեք խուսափել քննարկումը երկխոսության վերածելուց:
- Երբ մասնակիցը փորձում է արտահայտել իր կարծիքն ու վերաբերմունքը, նշաններով ցույց տվեք, որ ուշադրությամբ հետևում եք նրա խոսքին, գլխի կամ ձեռքի երևացող շարժումներով ցույց տվեք, որ արտահայտվող կարծիքը խիստ արժեքավոր է և խրախուսեք նրան լինել առավել անկաշկանդ:
- Հարցերը փորձեք ձևակերպել համառոտ և աշխատեք խուսափել հարցերից, որոնք «այո» և «ոչ» պատասխաններ են ենթադրում: Փոխարենը մշտապես տվեք «ինչո՞ւ» և «ինչպե՞ս» հարցերը:
- Եթե նկատում եք, որ լսարանը չի ընկալում ձեր հարցը, փորձեք այն մասնավորեցնել՝ առաջարկելով կոնկրետ օրինակներ:
- Եթե քննարկումն այլևս նոր մտքեր չի առաջարկում, կարող եք բոլորի ուշադրությունը հրավիրել մեծ էկրանին, որտեղ արտապատկերվում են հարևան սեղանների քննարկումներից առանձնացված մտքերը: Կարող եք անդրադառնալ այդտեղ ներկայացված առավել հետաքրքրական մտքերին և փորձել խրախուսել նոր քննարկում ձեր սեղանին:
- Ձեր սեղանին կարող են լինել մարդիկ, ովքեր սովոր են ղեկավարել քննարկումներ, փորձում են իրենց ձեռքը վերցնել քննարկումը, իրենց միտքը պարտադրել բոլորին: Հիշե՛ք, Դուք եք քննարկման «տերը»:
- Բոլոր մասնակիցները հավասար դերակատարում ունեն, ապահովե՛ք հավասարների քննարկում ձեր սեղանին:
- Այն մտքերը, որոնք, ըստ ձեզ, հետաքրքիր են, շեշտեք՝ ամփոփելով դրանք և այդպիսով հրավիրելով գրառողի ուշադրությունը:

Քվեարկության փուլը

Քննարկումն ավարտվել է քվեարկությամբ: Մասնակիցները պիտի ընտրություն կատարեն առաջարկվող սցենարներից մեկի օգտին:

- Սկսեք քվեարկությունը՝ բարձրաձայնելով սցենարների վերնագրերը:
- Խնդրեք, որ, ձեռք բարձրացնեն ովքեր կողմ են:
- Ամեն սցենարի քվեարկությունից հետո հաշվեք կողմ ձայները, բարձրաձայնեք դրանք, որպեսզի գրառողը մուտքագրի համակարգիչ:
- Նույն կերպ քվերակության դրեք հաջորդ սցենարերը:

Մենք վստահ ենք, որ դուք պրոֆեսիոնալ քննարկում վարող եք: Եվ ողջ քննարկումն ու քվեարկությունը կվարեք այնպես, որ դրանց ավարտից հետո Ձեր սեղանի մասնակիցներն այդպես էլ չեն իմանա, թե իրականում որն էր անձնապես Ձեր դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ:

Ցուցումներ քննարկման գրառողների համար

Ձեր խնդիրն է հավաքագրել քննարկումների ընթացքում հնչող արժանահիշատակ մտքերը:

Դուք քննարկումներին ընդհանրապես չեք մասնակցում: Լսում եք քննարկումը, որսում մասնակցի գաղափարը, մտքում այն վերաձևակերպում եք ամփոփ դիտարկման, մուտք անում ծրագրում և ուղարկում կենտրոնական համակարգիչ:

Հիշե՛ք՝ դուք արձանագրող չեք, որ արագությամբ մուտքագրեք այն ամենը, ինչը լսում եք: Ձեզ սպասարկող կենտրոնական համակարգիչը միաժամանակ սպասարկում է նաև մյուս սեղանների քննարկումները, եթե առանց մտքում համակարգված միտք դարձնելու գրեք ամեն ինչ, կենտրոնական համակարգչի օպերատորը չի հասցնի սպասարկել մտքերի անընդհատ հոսքը:

Աշխատեք բաց չթողնել յուրօրինակ ու գեղեցիկ մտքերը: Եթե միտքն ավարտական տեսքի բերելու համար հարկ կա որոշ խմբագրական, ոճական փոփոխություններ անել, մի՛ խորշեք:

Գրեք ոչ շատ երկար այնպիսի մտքեր, որոնք համապարփակ են և կարիք չունեն նախապատմության: Հիշեք, որ խմբագիրը, ով պիտի էկրան ուղարկի Ձեր միտքը, Ձեր սեղանի մոտ չէ, հետևաբար չգիտի թե ինչի մասին են խոսել ձեր քննարկման ընթացքում: Նախադասությունն ինքը պիտի պատասխանի բոլոր հարցերին: Եթե դուք ուղարկել եք որևէ միտք, իսկ հաջորդը շարադրում եք՝ որպես նախորդի շարունակություն, ապա հիշեք, որ Ձեր նախորդ հաղորդագրությունից հետո խմբագիրն արդեն ստացել է տասնյակ այլ մտքեր, և նա պարզապես չի կարող հիշել, որ դուք շարունակում եք նախորդ մտքերից մեկը: Ձեր ամեն հաղորդագրություն պետք է անկախ և ամբողջական լինի:

Փորձեք հնարավորին չափ խուսափել տառասխալներից:

Հետևեք քննարկումը վարողին, առանձին դեպքերում նա կամփոփի և կփորձի հասունացնել գրառման արժանի, սակայն դեռ անավարտ գաղափարը:

Եթե ընդհանուր «դահլիճը» քննարկում է երրորդ սցենարը, սակայն առաջին սցենարի վերաբերյալ հիշարժան միտք է առաջացել, ապա մուտքագրեք այն՝ սկսելով «առաջին սցենարի վերաբերյալ» արտահայտությամբ:

Քննարկումը վարողի օգնականից ժամանակին կստանաք հաջորդ սցենարին անցնելու հրահանգը:

Քվեարկության փուլում Ձեր խնդիրը յուրաքանչյուր սցենարին կողմ մասնակիցների ընդհանուր թվի մուտքագրումն է համակարգչային ծրագրի համապատասխան վանդակում:

Մենք չենք կասկածում Ձեր գեղեցիկ հայերենի և ճկուն մտքի հնարավորություններին:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: